

ԳՐԱԿԱՆ ՅՈՒԹԵՐ

8

ՅՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆԵԱՆ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՐԳԵՐ
(ՊՕԷՄՆԵՐ)

ՀԱՏՈՒԱԾՆԵՐ

ՎԵՆԵՏԻԱ - Ս. ՂԱԶԱՐ

ՄԻԻԹԱՐԵԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

291.99

29914.

P-89

201.99	29914.
P-89	Pineville, 2nd h.
1	1

Phrynosoma macleayi 20.

This image shows a blank, aged, cream-colored page, likely an endpaper or flyleaf from an old book. The paper has a slightly textured appearance with some minor discoloration and faint horizontal ruling lines. A vertical line runs down the right side of the page, creating a margin. The page is otherwise empty of any text or markings.

ԳՐԱԿԱՆ ՅՈՒՔԵՐ

8

Հրատարակութիւն
դպրոցական գործածութեան համար, պատրաստ-
ուած գրական եւ դաստիարակչական սլահանջներու
համաձայն:

Գրադարանի քարտ
ՄԻԻԹԱՐԵԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ Վ

ԳՐԱԿԱՆ ՑՈՒՔԵՐ

891.99
Թ-89

8

ՍՏՈՒԳԱՄ Է 1961 թ.

ՅՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆԵԱՆ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՐԳԵՐ
(ՊՕԷՄՆԵՐ)

ՀԱՏՈՒԱԾՆԵՐ



ՎԵՆԵՏԻԿ - Ս ՂԱԶԱՐ

1944


A 27999
II 28914

THE UNIVERSITY OF CHICAGO

LIBRARY

1911

1911



THE UNIVERSITY OF CHICAGO

1911

ՌԵՊԵ ԱՆԸՈՒՆ

Ա.

Հընչում էր փըրփըրուն վըտակն արծաթի
Արեւը խաղում պայծառ կապոյտում...
Առանց հոգսերի ու առանց վըշտի
Խաղում էինք մենք էն երազ հովտում,
Ու թընդում էր հեշտ ծիծաղը ծաղրող.
— Ձե՛ս կարող, չէ՛, չես կարող...

Ձէի կարենում բըռնեմ ես նըրան:
Ճերմակին տալով՝ ծառերի ետեւ
Ծածկըում էր նա աչքէս անդուման՝,
Կըրկին յայտնըում ճապուկ ու թեթեւ,
Ու թընդում էր միշտ ծիծաղը ծաղրող.
— Ձե՛ս կարող, չէ՛, չես կարող...

Մին էլ ես ճարպիկ մի շարժում արի,
Բըռնեցի նըրան: Յանկարծ նա ճըչաց,
Ձեռքումըս դառաւ ճերմակ աղանի,
Ու թեւին արաւ, ու թըռա՛ւ, դընաց.
Գընա՛ց ճախրելով էն երազ հովտում,
Սուղեց, չըքացաւ պայծառ կապոյտում...

Բ

Վեր թըռայ քընից, դուրսը նայեցի.
Արեւը ուրախ զարկել էր սարին,
Բնութիւնն անհող, թարմ ու նազելի
Ձուգւում էր, ժըպտում մանուկ արեւին:
Գիշերն անցել էր. բայց իր ետեւից
Մըռայլ էր թողել գեռ ցած՝ հովիտում:
Էդպէս տակաւին անցած երազից
Ուաւար մի բան կար նըստած իմ սըրտում:
Թէկուզ երազին չես էլ հաւատում,
Բայց օտար տեղում, քո տանից հեռու,
Սիրտըդ մի յամառ կասկած է մըտնում.
Թէ՛ մի մահադոյժ սեւ բօթ է զալու...
Յասմիկն երազում աղաւնի դառաւ,
Աղաւնի դառաւ՝ իմ ձեռքից թըռաւ...
Լոկ երա՞ղ էր այս: Բայց երազն ի՞նչ է:
Երազ, թէ իրօք — այդ միթէ մի՞նչ է,
Երազն էլ երբոր կարող է կանչել,
Կարող է յուզել, խընդացնել, տանջել...

Յասմիկն ապրում էր — Յասմիկը մեռաւ...
Երազը եկաւ — երազը թըռաւ...
Կեանքը երազ է, երազն էլ մի կեանք,
Երկուսն էլ անցւոր, երկուսն էլ պատրանք:

Եւ թէ հաստատուն մի բան կայ անմահ,
Արդեօք իմաստուն հողին չի՞ միայն նա,
Որ թէ յարթըմնի՞ եւ թէ երազում
Ապրում է, տեսնում, ըղղում ու յուզում...

Ու... դիր է գալիս ահա իմ տանից,
Թէ՛ կինըս հիւանդ — ըսպասում է ինձ...

Գ

Տո՛ւն, տո՛ւն, դէպի տուն
 Թըռչում եմ արթուն,
 Որպէս երազում:
 Շուրջըս ամեն բան
 Ըշտապ, ինձ նման,
 Անցնում է, վազում:

Շըշմած դըլխիս մէջ
 Գալիս են անվերջ
 Ու ճընշում իրար
 Զանազան դէպքեր,
 Յուշեր ու մըտքեր,
 Պայծառ ու խաւար...

Տեսնում եմ նըրան՝
 Կանգնած է դարնան
 Շողերի միջին,
 Ու ժըպտում է ինձ
 Իր պատուհանից՝
 Ծաղիկը լանջին...

Տեսնում եմ մեռած,
 Ծաղկով զարդարած,
 Դըրած դադաղում.
 Տըխրալի մի օր,
 Արտասուք, սըղւոր.
 Սեւեր ու թաղում...

Տո՛ւն, տո՛ւն, դէպի տուն.
 Ու միւս իրիկուն
 Մեր տան դէմ ելայ:
 Մի սեւ-սեւ զանգւած՝
 Կուտակուած, կանգնած
 Մեր դըռանն ահա...

Պըտոյտ է դալիս
Աշխարքը գըլխիս ,
Երկինքը մըթնում...
Ողջ կանգնած են լուռ ,
Ու ներսից տըխուր
Չայներ են թընդում...

Դ

«Յա'սմիկ ջա'ն, եկա'ւ... դէ վեր կա'ց... վեր կա'ց...»
Դուրս հոսեց դէմըս տըրտում ու յողնած
Նըրա մօր ձայնը... խունկի ծըխի տակ
Աչքովըս ընկաւ դադաղը ճերմակ,
Ու շուրջըս մըթնեց: Տեղըս կորցըրի...
Մարդից, արեւից, աշխարքից հեռի,
Մի անտակ ձորում, սե'ւ ու խոր ջըրում
Տարւում էի ես, խեղդւում, չարչարում.
Բարձր էին ասիւրն, ողորկ ու դըժար,
Մի թուփ չը կար դէթ ըրոնելու համար,
Չը կար կենդանի ձա'յն, ըստուե'ր, նըչա'ն,
Որ կարենայի կանչել օգնութեան...

Ե

Հա', հա', հա', հա', հա', զըւարթ քըրքիջով
Մի ծիծաղ անցաւ փողոցի միջով:
Ես ուշքի եկայ, աչքըս բաց արի,
Տեսայ աշխարքը ու լոյսն արեւի,
Տեսայ՝ նըստոտած մարդիկ շըշընջում,
Անտարբեր թեքւած՝ իրար ականջում
Խօսում են ուրիշ բաների վըրայ,
Ու ոմանք ժըպտո'ւմ, ժըպտում աչկարա³...
Իսկ կողքիս նըստած ալեւոր մի մարդ

³ Աշկարա. (թրք.) յայտնի կերպով:

Խըրատում էր ինձ միալար, հանդարտ .
 — Մի՛ լար, սիրելի՛ս, երեխայ չես դու,
 Ինչքան էլ որ լաս — ի դուր ես լալու .
 Քու ձայնը երբեք էլ չի լրսիլ նա,
 Ոչ կը հասկանայ, ոչ էլ ետ կը դաշ :
 Այսպէս կամեցաւ Աստուած, երեւի,
 Որ նըրա օրը շուտով խաւարի...
 Մենք հողեղէններս՝ անճար ու չընչին,
 Ի՛նչ ենք Աստուծոյ կամքի առաջին...
 Բաց է այս ճամբէն ամենքիս համար .
 Ծեր, երիտասարդ, մեղաւոր, արդար, —
 Ամե՛նք, ամենքը, այստեղ ինչ որ կան
 Այսօր թէ էգուց ամենքը կերթան,
 Ով որ կը մընայ,
 Թող նա պարծենայ :

Զ

Ես լրտում էի... Ու յանկարծ ես էլ
 Ուղեցի հաշուել հըզօր մահի հետ .
 Անճար, ակամայ սկսայ մըտածել,
 Թէ մահը լաւ է, միայն մենք՝ տղէտ,
 Մենք խեղճ, կարճամիտ, ու չենք հասկանում՝
 Ինչպէս է դալիս եւ ուր է տանում,
 Թէ՛ ե՛ւ կեանք, ե՛ւ մահ—անցաւոր, ունայն
 Մի մեծ յաւերթի ձեւերն են միայն,
 Ինչպէս որ ահա «երէկն» ու «այսօր» :
 Այսօրն ինչ է որ, — մի երէկ է նոր,
 Այսօրն էլ կանցնի, երէկ կը դառնայ,
 Եւ սակայն կըրկին միեւնոյն է նա :
 Եւ այսպէս անվերջ այսօր ու երէկ
 Փոփոխուում են միայն, միշտ մընում է մէկ —
 Մէկ մեծ ժամանակ : Իսպէս եւ հողին
 Փոփոխում է միայն կեղեւն արտաքին —
 Մարմինն՝ այսօրւան օրին նըմանակ,
 Իսկ ինքը անվերջ, ինչպէս ժամանակ :
 Կամ եւս սիրուն, — հոսանուտ մի գետ,

Որ հազար ալիք ու ծրփանք ունի .
 Գալիս են ալիք, անցնում են անհետ,
 Անցնում են դէպի անդունդն ու վիհանի,
 Ուր ամեն ալիք, ուր ամեն մի կաթ
 Ապրում է դարձեալ անվերջ անընդհատ...
 Այսպէս փոխակերպ հոսում է, գընում,
 Գընում անհունի անճառ սահմանում,
 Դէպի գերազանց վիճակն երջանիկ,
 Ակն երջանկութեան, սիրոյ հայրենիք,
 Ուր չը կան մարդիկ եւ ոչ ըզգացում,
 Ուր ողջին մի մեծ կեանք է միացնում...
 Եւ ի՞նչ է սիրոյ իմաստը վերին,
 Ի՞նչ երջանկութեան խորհուրդը խորին, —
 Հալւե՛լ, միանա՛լ,
 Իրեն մոռանալ . . .

Եւ անշուշտ մի օր, հանդերձեալ կեանքում,
 Երկրում թէ ալլուր, վերեւ՝ երկընքում,
 Էն անյայտ ճամբով, որով նա գնաց,
 Ես էլ կը թռչեմ՝ աշխարհը թողած,
 Ու կըզգամ նըրան, կապրեմ նըրա հետ
 Մի ուրիշ անվե՛րջ կեանքով երկնաւէտ...

Է

Բայց ես միշտ թաքուն մի յոյս ունէի,
 Թէ կարող էր նա լինել... կենդանի...
 Մի տեղ մի անգամ հդպէս է եղել .
 Տարել են մէկին, ուղել են թաղել,
 Շիրմի փոսի մէջ զարթնել է յանկարծ,
 Կարող էր եւ մեղ լինել պատահած...

Ը

— Ո՛չ, ո՛չ, նա գընաց էլ ետ չի գալու,
 Եւ հդպէս ու միշտ մեղք ես մընալու:
 Թէկուզ եւ հազնես երկաթի տըրեխ,

Փընտրես՝ կանչելով աշխարհ բովանդակ,
 էլ չես հանդիպիլ նրբան ոչ մի տեղ,
 Ոչ մի աշխարհում, ոչ մի ժամանակ . . .
 էն պաղ դիակն էլ, որ տեսնում ես դեռ,
 էն էլ հողի տակ կը ծածկեն հիմա,
 Կըզա՞ն, կըզնա՞ն տարիքն անտարբեր,
 Ու նա կը փրթի, նա հող կը դառնայ.
 Անունն էլ ապրող աշխարհի համար
 Դատարկ մի հընչիւն, անխորհուրդ մի բառ . . .
 էն էլ կը կորչի, ինչպէս որ չըկայ
 Անունն ու հետքը էն հին աղջըկայ,
 Որ ձեզնից առաջ հաղար տարիներ
 Նոյնպէս սիրահար ու ժրպիտ ունէր:
 Եւ ի՞նչ է մարդը, եւ ի՞նչ իրեն կեանք. —
 Եղծական ձեւեր, ձայներ, շարժումներ.
 Յաւերժականը չունի կերպարանք,
 Նա լուռ է, անշարժ, հաստատ, աներեր...
 Անողորմ մի ձայն էսպէս ինձ կանչում,
 Տանջում էր հողիս, խորտակում, ճընշում:
 Ճիւղ էի անում նրբան լրեցնել,
 Սիրտըս էլ հետը պոկել⁴, հեռացնել
 Ու դրոնել մի ձայն, մի հընչիւն, մի բառ,
 Որ կեանքի, յոյսի նըշոյլ ունենար . . .
 Ուղեցի «Աստու՛ծ» մին աղաղակել,
 Բայց չէ՞ որ նա էր էն մահն ուղարկել:

Թ.

Մի անհուն ցաւի մըրմուռի նըման
 Ծաւալում էին զանգերը թաղման,
 Ու ժամի ծըխտո կամարների տակ
 Կանգնած էր արդէն տըխուր պատարաղ.
 Տըխուր պատարաղ, տըխուր մեղեդիք,

⁴ Պոկել. փրցնել, տեղէն հանել:

Տըխուր աղօթքներ ու տըխուր մարդիկ,
 Մէջ տեղը ճերմակ դադաղը նրա
 Դըրած սեւաքօղ սեղանի վըրայ,
 Ու նա դադաղում, ասես թէ քնած,
 Հարսնական ճերմակ շորով պըճնըւած,
 Անփո՛յթ, անզւա՛յ կեանքին ու մահւան,
 Իր դադաղն ածած վարդերի նըման . . .
 Էստեղ՝ բըռնըւած մի նոր տաղնապով՝
 Ուզեցի գըտնել մըտքի մի թափով,
 Թէ ի՞նչ էր արդեօք, էն ի՞նչ էր լինում,
 Ի՞նչ էր պատահել, նա ո՛ւր էր գընում . . .
 Եւ իսկոյն, ասես, դիպայ մի քարի:
 Մըտքերըս հատան: Առանց մըտքերի
 Կանգնած էի ես խորտակւած ու սաղ:
 Լուռ էր: Հոգեւոր երգերը մենակ
 Ծաւալում էին վըսեմ ու խաղաղ:
 Ես լըսում էի, լըսո՛ւմ շարունակ:

«Էս անցաւոր երկրի վըրայ
 Լըցան օրերն պանդրխտութեան,
 Երկնասըլաց գընում է նա,
 Հաղած մարմին անապական,
 Անմահացա՛ծ մահկանացուն՝
 Միանալու իր Աստըծուն:

Էստե՛ղ, Վերին Երուսաղէմ,
 Օթեւանում հըրեշտակաց,
 Ուր որ Ենովք ու Եղիաս,
 Աղաւնակերպ կան ծերացած,
 Էն աշխարհո՛ւմ անտըխրական
 Արդարքն ապրում են յաւիտեան:

Եօթնաստեղեան լոյս խորանում,
 Ուր ցաւ չը կայ, ոչ հեծութիւն,
 Ընտրեալ հոգիքն ուրախանում,
 Խայտում են միշտ անվե՛րջ, անհո՛ւն
 Բերկրանքներով յարազըւարճ,
 Աստծոյ զըւարթ աչքի առաջ:

էնտեղ նըրանք, միշտ բախտաւոր,
 Նայում են Հօր լոյս երեսին,
 Նըրա առջեւ պաղատաւոր
 Նըրանց համար, որ թողեցին.
 Ու իջնում են, մըխիթարում⁵
 Մեզ տըրտմալի էս աշխարհում . . .»

Թողւած, կախարդւած, տարւած էն երգին,
 Վերացաւ, թըռաւ իմ վշտոտ հոգին
 Դէպի երջանիկ մի ուրիշ աշխարհ,
 Անյայտ ու հեռու, անծանօթ, օտա՛ր . . .
 Եւ էն աշխարհը հըրաշալի՛ էր.
 Ոչ սուգ կար էնտեղ, ոչ վայելք, ոչ սէր,
 Ոչ կարելի էր կորցընել մի բան
 Եւ ոչ ունենալ քաղց աղահուսթեան.
 Որպէս զերեղման եւ ունայնութիւն՝
 Լուռ էր ու դատարկ, անխառք ու անհուն.
 Որպէս հայեացքը մեռելի աչքի՝
 Մի միտք ունէր միշտ առանց յուզմունքի,
 Հոգեղէն մարդուն անյայտ խորհըրդով
 Յաւիտեան սառած, խաղա՛ղ, անվըրդով . . .
 Ու անշարժ կանգնած, դալուկ ու լըռիկ,
 Ըստուերնե՞ր էին, անմարմին մարդի՞կ,
 Տըժգոյն, անարեւ, աղօտ լուսի մէջ
 Աղօթում էին անձայն ու անվերջ,
 Աղօթքն էլ սակայն ոչինչ չէր խընդրում.
 Ոչ աղատութիւն, ոչ մահ, ոչ խընդում⁶ . . .

⁵ Հոս եւ վերելի տողերուն մէջ Թ. կը հետեւի մեր շարական-ներու իմաստին՝ հոգիներու երանութիւնը նկարագրելով աստուած-տեսութեան մէջ եւ անոնց աղօթքն ու բարեխօսութիւնը անոնց համար որ զեռ երկրիս վրայ կը տառապին:

Ժ

Յանկարծ լրուութիւնն ինձ ուշքի բերաւ,
Աչքիս առջեւից հըրաշքը թըռաւ:
Պատարադն արդէն վերջացրել էին:
Դադաղը շարժեց, թընդաց ահագին
Սասանիչ երգը մահւան սարսափի,
էն լացն ու կոծը, օրհներգը մահի,
Որով մեռելին հրաժեշտ են տալիս
Դէպի գերեզման ճամբու գընելիս,
Երբ ծառս⁶ է լինում վիշտը մայրական
Դէպ դահն Արարչի—ղըրկողը մահւան,
Արձակում ցասկոտ իր ճիչը յետին
Ու թոյլ յուսահատ ընկնում է գետին:

ԺԱ.

Դուրս եկանք դուռը: Նայեցի վերեւ:
Վերեւն, ինչպէս միշտ, փայլում էր արեւ.
Բոլորն աշխարքում կարդին ու հանդարտ,
Ու ինչպէս երէկ՝ էնպէս ամեն մարդ. . .
Բայց երկինքն էնքա՛ն պայծառ էր էնօր,
Եւ պայծառութիւնն էնքա՛ն էր տըրտում,
Տըրտութիւնն էնքան խոր, հանդիսաւոր,
Որ թըռում էր ինձ, թէ ջինջ կապոյտում՝
Վերջին հըրաժեշտ տալով աշխարքին՝
Ճախրում էր նըրա հեռացող հոգին. . .
Ու մըտքովս անցաւ յանկարծ ակամայ,
Թէ արդեօք նըրա աչքերը անմահ
Նայո՞ւմ են ներքեւ, տեսնո՞ւմ են ինձ էլ,
Թէ ո՞նց եմ ցաւիս տակին կորացել. . .
Եւ կամ ո՞րն է նա. էն շո՞ղն է պայծառ,
Որ զըւարթ խաղով, աշխոյժ ու կայտառ

6 Ծառս լիմել. ծառանալ, բարձրանալ, ընդդիմանալ:

Կորչում է, մըտնում թուխպ⁷ ամսլի ետեւ,
Ազատ, երկնաչու էն ամսն է թեթեւ,
Թէ՞ էն աղաւնին, որ հիմա թըռաւ,
Անփոյթ ճախրելով՝ ջինջ օդում կորաւ. . .

ԺԲ

Յանդո՛ւղըն մըտքեր, ո՞ւր էք սըլանում,
Ի՞նչ էք որոնում այն մութ սահմանում:
Ահա մեր կեանքի սահմանը վերջին,
էս սեւ ու տըխուր թումբերը չընչին. . .
Լո՛ւռ գերեզմաններ. քանի՜ սըղաւոր
Ձեր եղերքներին կանգնել են մի օր,
էս դատարկ կեանքին, անհաստատ բախտին
Անէծքներ տալով բեկեւել, հեռացել,
Երբ որ սիրածի դադաղը մըթին
Վիհ են իջեցրել ու դէմքը ծածկել. . .
Եւ ո՛րքան ըղձեր, սըրտեր ու զգացմունք
Թաղած են, մարած ձեր լուռ փոսերում.
Ահա ե՛ւ մի նոր բարձրացած սեւ թումբ,
Դեռ թաց է հողը, դեռ խունկ է բուրում,
Իսկ մենք ուզում ենք ուրիշին թաղել,
Որ ապրում էր դեռ երկու օր առաջ. . .
Եւ անշուշտ մի օր սըրա շիրիմն էլ
Կը ծածկի նոյնպէս մամուռը կանաչ,
Կանի հաւասար քարին ու հողին,
Ինչպէս դըրացու անկողինը հին:
Նըրանից յետոյ դէ՛ եկ՝ իմացի՛ր,
Թէ ով է թաղած քու ոտի տակին,
Ի՞նչ ցեղից էր նա, ի՞նչ ձիրքեր ունէր.
Անահ հերո՞ս էր, գեղանի մի կի՞ն,
Անհոգ մի ջահի՛լ, անկըշտում ագա՞հ.
Աղքատ, թէ հարո՞ւստ. — ձա՛յն, նըչան չը կայ. . .

⁷ Թուխպ (նաեւ քուղր կամ քուղփ). մռայլ, սեւ:

ԺԳ

Եւ . . իջնում էր նա ընդմիշտ իմ աչքից .
 Կեանքից, արեւից, էս լոյս աշխարհից . . .
 Կորացայ, վերջին համբոյրըս տըւի,
 Ու էն համբոյրով դադադում զըրբի
 Խընդում, սէր, ըզձեր, ամե՛ն, ամեն բան . . .
 Ինձ ետ քաշեցին, մի կողմը տարան :
 Իսկոյն հետեւեց խուլ գըրգըռոցը,
 Քարով ու հողով լըցրին էն փոսը,
 Դադադն էլ, ինքն էլ ծածկեցին յանկարծ,
 Ասես թէ բընաւ աշխարհ չէր եկած,
 Եւ այսուհետեւ երբե՛ք, յաւիտեան
 էլ չի տեսնելու արեւը նըրան . . .
 Յուզարկներն էն ժամ մօտ եկան մի-մի .
 — է՛հ, Աստուած նըրա հողուն ողորմի .
 Մի օր էլ մենք ենք էսպէս դընալու,
 Ո՛ր է աշխարհիս վըրայ մընալու .
 Կեանքն էլ է դատարկ, մարդն էլ է դատարկ,
 Անցաւոր են ողջ-բախտ, վայելք ու փառք . . .
 Ասացին՝ հանդիստ հողոց հանելով,
 Ու դարձեալ հանդիստ զըրոյց անելով
 Գընացին իրենց տըները անհող :
 Շուրջըս նայեցի, չէր լալիս ոչ ոք .
 Երկինքն էլ էնպէս սլայծա՛ռ ու հանդարտ .
 Եւ ինչպէս երէկ, էնպէս ամեն մարդ . . .

ԺԴ

Եկաւ գիշերը : Իմ յոգնած հողուն
 Իջաւ տանջալի մի խաղաղութիւն :
 Վայր ընկայ, ինչպէս ուժաթափ մի բան,
 Որ ըզդում է միայն կարօտ հանգրստեան,
 Բայց ճըզնում է դեռ, աշխատում ունայն
 Ուզում է յիշել, թէ ի՞նչ բան էր էն .
 Մի խառն երա՞զ էր, մի աշխարհք ուրիշ,
 Գինու մի քէ՞Փ էր, ծաղը՞ր, թէ՞ սլաութ . . .

Մըրափը սակայն ծանրը ու դանդաղ
 Զոքեց ինձ վըրայ՝ սեւ թեւերը կախ,
 Միտքըս իր թեւը կըտրեց ու թռաւ,
 Անհուն, խաւարչտին քառսում կորաւ.
 Մահ, մեռել, շիրիմ-թեթեւ հեռացան
 Ու հեռանալով՝ փոխեցին, դարձան
 Ամպեր, ըստուերներ, կէտեր երեւուն,
 Դողացին, հանդան, ու մըթնեց հեռուն. . .
 Կարճատեւ մի քուն եկաւ ինձ վըրայ,
 Եւ ես միւս անգամ երազում տեսայ.

ԺԵ

Հընչում էր փըրփրուն վըտակն արծաթի,
 Արեւը խաղում պայծառ կապոյտում.
 Առանց կորուստի ու առանց վըշտի
 Կանգնած էի ես այն երազ հովտում:

Ծուրջըս չուշաններ, անվե՛րջ չուշաններ,
 Լիքն էր անտառը անուշ բուրմունքով,
 Եւ եղեմական ներդաշնակ ձայներ
 Փառք էին տալի թովչական երգով,

«Փա՛ռք անպատում մըխիթարչին,
 Փա՛ռք խորհուրդին անմահութեան.
 Նա է կըրում յոյսը վերջին
 Ու շողն անշէջ, արարչական.
 Փա՛ռք խորհուրդին անմահութեան:

Նա տանում է բարձր ու անվերջ
 Դէպի անհունն ու յաւիտեան,
 Վիշտը հանգչում⁸ է նըրա մէջ,
 Ապրում սէրը անապական.
 Փա՛ռք խորհուրդին անմահութեան. . .»

⁸ Հանգչել. մեռնիլ, սպառիլ:

Ու լըսում եմ ես այն խաղաղ օդում
 Քընքոյշ ու զըլարթ ձայնը սիրելի,
 Անյայտ ու անտես կանչում է նա ինձ,
 Կանչում գերազանց մի ուրիշ կեանքի։

«Արի՛ ինձ հետ, իմ թըշա՛ռ,
 Ես քեզ տանեմ մի աշխարհ,
 Ուր չը կայ մահ, անջատում,
 Ու սէրն անվե՛րջ, անհատնո՛ւմ...»

Արի՛, թըռի՛ր, գընա՛նք ինձ հետ,
 Անցա՛ւ, անհո՛ղ, անյո՛ւշ, անհետ...»

1894



ՆԱԽԵՐԳԱՆՔ

(Համբարձման գիշերը)

Բազմած լուսնի նուրբ շողերին,
Հովի թեւին՝ թռչելով՝
Փէրիները սարի գլխին
Հաւաքեցին դիշերով:

—«Եկէ՛ք, քոյրե՛ր, սէգ սարերի
Ձրդնաղաղեղ ողիներ,
Եկէ՛ք, ջահել սիրահարի
Սէրը ողբանք վաղամեռ:

Օխտն աղբիւրից ջուր է առել,
Կոյս սափորով, լուռ ու մունջ,
Օխտը ծաղկից ծաղիկ քաղել,
Կապել սիրոյ ծաղկեփունջ:

Ջուրն ու ծաղիկ աստղունք դրել,
Խընդիրք արել աստղերին,
Փափաղ սըրտով խնդիրք արել՝
Բարի ժպտան իր սէրին. . .

Ափսո՛ս, Անո՛ւշ, սարի ծաղիկ,
 Ափսո՛ս իդիթ քու եարին.
 Ափսո՛ս բոյիդ թելիկ-մեղիկ,
 Ափսո՛ս էդ ծով աչքերին. . .»

Ու նրանց հետ՝ ցօղ-արցունքով
 Լըցւած սըրտերն ու աչեր՝
 Սարի ծաղկունք տըխուր սիւքով
 Հառաչեցին էն գիշեր:

«Վուշ-վո՛ւշ, Անուշ, վուշ-վո՛ւշ, քուրի՛կ,
 Վո՛ւշ քու սէրին, քու եարին. . .
 Վուշ-վո՛ւշ, Սարո՛, վուշ-վուշ, իդի՛թ,
 Վո՛ւշ քու սիրած սարերին. . .»

— Եկէ՛ք, քոյրե՛ր. սէգ սարերի
 Չըգնաղագեղ ոգիներ. . .»
 Ու փէրիններն էսպէս տըխուր
 Երդում էին ողջ գիշեր:

Կանչում էին հըրաշալի
 Հընչիւններով դիւթական,
 Ու հէնց շողաց ցոլքն արեւի՝
 Անտես, անհետ չըքացան:

Խոր սուզեցին ալն աղբիւրի,
 Մըտան կաղնին հաստաբուն,
 Ու լեռնային վըտակների
 Ալիքները պաղպաջուն:

ԱՌԱՋԻՆ ԵՐԳ

Ա.

Կանչում է կըրկին, կանչում անդադար
 էն չըքնաղ երկրի կարօտը անքուն,
 Ու՛ թեւերն ահա փրօած տիրաբար՝
 Թըռչում է հոգիս, թըռչում դէպի տուն:
 Ուր որ հայրենի օջախի առաջ
 Վաղո՛ւց կարօտով ըսպասում են ինձ,
 Ու ձըմբան երկար դիշերը նըստած
 Խօսում են Լօռու հին-հին քաջերից:

Դէպ էն սարերը, որ վէս, վիթխարի,
 Հարբած շարքերով բըռնած շուրջպարի,
 Հըսկա՛յ շուրջպարի բըռնած երկընքում,
 Հըրճւում են, ասես էն մեծ հարսանքում
 Պերճ Արադածի նաղելի դըստեր,
 Որ Դեւ-Ալ, Դեւ-Բէթ եւ այլ հըսկաներ,
 Խօլ-խօլ հըսկաներ հընոց աշխարհի,
 Փախցըրին բերին անառիկ Լօռի՛:

Բ.

Է՛յ հին ծանօթներ, է՛յ կանանչ սարեր,
 Ահա ձեզ տեսայ ու մխտըս ընկան,
 Առաջըս եկան երջանիկ օրեր,
 Սիրելի դէմքեր, որ հիմի չըկան:
 Անցել են, ոնց որ ծաղկունքը սէս-սէս,
 Որ անցած դարնան կային ձեր լանջում.

¹ Առասպելն ասում է քէ՛ Դեւ - Ալը (Դաւլ սարը), Դեւ - Բէթը (Դերեդ դեսը) եւ ուրիշ դեւեր՝ յափշտակել են Արագածի աղջիկը, բերել են Լօռի: Ծանօթ. Հեղինակին, տպ. Թիֆլիս, 1903 եւ 1904:

Անցե՛լ ձեր գըլխի հէրւան ձիւնի պէս,
 Բայց եկել եմ ես՝ նըրանց եմ կանչում:
 Ողջո՛յն ձեզ, կեանքիս անդրանիկ յուշեր,
 Որբացած հոգիս ողջունում է ձեզ,
 Թըռչուն կարօտով փընտրում ձոր ու լեռ,
 Դիւթական ձայնով կանչում է հանդէս:
 Դո՛ւրս եկէ՛ք կըրկին շիրմից, խաւարից,
 Դո՛ւրս եկէ՛ք տեսնեմ, շօշափեմ, լըսեմ,
 Կեանքով շընչեցէ՛ք, ապրեցէ՛ք նորից,
 Լըցրէ՛ք պօէտի հաճոյքը վըսեմ...

Գ

Եւ մութ այրերից մամռոտ ժայռերի,
 Թաւուտ ծըմակի լըռին խորքերից
 Մանուկ հասակիս հընչուն ծիծաղի
 Արձադանքն ահա լըսում են նորից:
 Թընդում է գըլարթ աղմուկը բինի².
 Բարձրանում է ծուխն իմ ծանօթ ուրթից³,
 Ու բոլորն, ահա, նորից կենդանի
 Ելնում են աշխոյժ վաղորդեան մութից,
 Ու թա՛րմ, ցօղապատ լեռների լանջում. . .
 Սո՛ւս... ականջ արա, — հովիւն է կանչում...

Դ

— Աղջի՛, անաստեած, նըստի՛ր վըրանում,
 Ի՞նչ ես դուրս գալիս, խելքամաղ՝ անում;
 Աշուղ ես շինել, չեմ հանգըստանում, —
 Խաղեր կապելով,

² Բինա. սարուորի վրաններու խումբը կամ տեղը:

³ Ուրթ. սար իջնելու տեղ. սարուորներու բնակատեղը — բինատեղ:

⁴ Խելքամաղ անել. խելքէ հանել, գեղեցկութեամբ խելացնոր դարձնել:

Զօլեր չափելով,
Ոչխարըս անտէր,
Ընկել եմ հանդեր:

Ամա՛ն էրեցիր սիրտըս քու սիրով,
Ոտըս կապեցիր թել-թել մաղերով,
Էլ չեմ դիմանալ, կը փախցնեմ զօռով,
Ա՛յ սարի աղջիկ,
Ա՛յ սիրուն աղջիկ,
Ա՛յ դու կարմրաթուշ,
Թուխամաղ Անուշ:

Քու հէրն ու մէրը թէ որ ինձ չըտան,
Արին կը թափեմ ես դետի նըման.
Սարերը կընկնեմ կորչեմ անդիւման,
Ա՛յ սեւ աչքերով,
Ա՛յ ծով աչքերով,
Ունքերդ կամար
Աղջիկ քեզ համար:

Ե

Երգում է Սարօն, ու չի կարենում
Աղջիկը հանդիստ նըստի վըրանում:
— Էն ո՞վ էր, նանի՛, որ կանչում էր մեզ,
Դու չե՞ս իմանում... ականջ արա, տե՛ս...
— Հերի՛ք է, Անուշ, ներս արի դադէն⁵,
Քանի՛ դուրս թըռչես, նայես դէս ու դէն,
Տեսնողն էլ կասի — ի՛նչ աղջիկ է սա...
Հազար մարդի մօտ կերթայ կը խօսայ:
— Մըտի՛կ տուր, նանի՛, էն սարի լանջին,
Ի՛նչքան աւլուկ⁶ է տալիս կանանչին⁷...

⁵ Դագա. փոքրիկ տաղաւար՝ սարի վրայ, բանջարանոցներու կամ
կալերու մէջ:

⁶ Աւլուկ. ճաշակելի բանջար մը:

⁷ Կանանչին տալ. կանաչնալ, կանաչ դոյն առնել:

Նանի՛, թող դընամ քաղեմ ու հիւսեմ,
 էն սարի լանջին «ջան դիւլում» ասեմ:
 — Հանգի՛ստ կաց, Անո՛ւշ, դու հասած աղջիկ,
 Ի՞նչ ունիս ջահել չորանների մօտ,
 Նըստիր վըրանում, քու գործին մըտիկ.
 Պարկէչտ կաց, աղջի՛, ամօթ է, ամօ՛թ:
 — Ա՛խ, սիրտըս, նանի՛, չը գիտեմ ընչի,
 Մին լաց է լինում սեւակնա՛ծ⁸, տըխո՛ւր,
 Մին թեւ է առնում, ուզում է թըռչի.
 Ջըգիտեմ՝ թէ ո՛ւր, չըգիտեմ՝ թէ ուր...
 Նա՛նի ջան, նա՛նի, ես ի՞նչպէս անեմ,
 Ի՞նչ անի անքուն, անհանգիստ բալէդ
 Նա՛նի ջան, նա՛նի, կուժը թող առնեմ
 Աղբիւրը դընամ աղջիկների հետ...»

Զ

Կրժերն ուսած՝ թըրըռալով
 Ջուրն են իջնում աղջիկներ,
 Խընդում իրար ուսի տալով,
 Երգը զընդում սարն ի վեր:

— Ամպի տակից ջուր է դալի
 Դօշ⁹ է տալի, փըրփըրում.
 Էն ո՞ւմ եարն է նըստած լալի
 Հօնգուր—հօնգուր¹⁰ էն սարում:

Ա՛յ պաղ ջըրեր, զուլալ ջըրեր,
 Որ դալիս էք սարերից,
 Գալիս՝ անցնում հանդ ու չօլեր,
 Եարս էլ խըմե՞ց էդ ջըրից:

⁸ Սեւակնած. մթադնած, խոժոռ:

⁹ Դօշ (տալ). կուրծք (տալ):

¹⁰ Հօնգուր—հօնգուր. հեկեկալով, աղիողորմ լալ:

Եւրաբ խըմե՞ց, եւրաբ հովցա՞ւ
Վառւած սիրտը էն եւրի,
Եւրաբ հովցա՞ւ, եւրաբ անցա՞ւ
Անքուն ցաւը ջիգեարի...

— Աղջի, քու եարն եկաւ անցաւ
Վառւած, տարւած քու սիրով,
էրւած ջիգեարն՝ եկաւ անցաւ,
Ձըհովացաւ պաղ ջըրով...»

Ամպի տակից ջուր է դալի,
Դօշ է տալի, փըրփըրում.
Ա՛խ, իմ աղիդ¹¹ եարն է լալի
Հօնդուր—հօնդուր էն սարում:

Է

Ու պառաւ նանի սըրտի մէջ յանկարծ
Ձէն տըւաւ թաքուն մի խաւար կասկած.

— Էն ե՛րբ էր Անուշն իր կուժը առաւ,
Աղբիւրը դընաց ու ետ չըդառաւ...

Ամպերն եկել են սարերը պատել,

Ձորերը լըցւել, իրար փաթաթւել,

Հաղար չար ու շառ¹², հաղար հարամի,

Հաղար ջահելներ վըխտում են հիմի...»

Ու ելաւ տեղից պառաւը յանկարծ.

— Ո՛ւր կորար, Անո՛ւշ, ա՛յ մաղդդ կըտրած...»

Ու ձորի գըլխին, ձեռքը ճակատին,

Կանչում է, կանչում անաս դաւակին:

— Աղջի՛, սեւասի՛րտ, քու ա՛նը կըտրի,

Աղջիկը մենակ ձո՞րը կը մըտնի:

Ամպը կոխել է, աշխարքը մըթնել,

Ի՞նչ ես կորցըրել, չես կարում գըտնել...

¹¹ Ագիգ. սիրելի, հարազատ, սուրբ:

¹² Շառ... հարամի. սուտ... աւաղակ:

Աղջի, հէ՛յ Անուշ, ա՛յ աղջի՛, Անո՛ւշ...»
 Ծընկանը զարկում, հառաչում է «վո՛ւշ»,
 Ու ձորի գլըխին մոլորւած կանգնած
 Նայում է ներքեւ սիրտը սեւակնած:
 Ամպերն եկել են սարերը պատել,
 Ձորերը լըցւել, իրար փաթաթւել,
 Հաղար չար ու շառ, հաղար հարամի,
 Հաղար ջահելներ վըխտում են հիմի:

Ը

— Թո՛ղ, կանչում են ինձ... մէրըս կիմանայ...»
 — Չէ՛, Անո՛ւշ, քի՛չ էլ, մի՛ քիչ էլ մընա...»
 — Չէ՛, Թող ես գնամ... ա՛խ, ի՛նչ խենթ եմ ես...
 Դու ինձ չես սիրում, չես սիրում ինձ պէս,
 Հէնց ես եմ մենակ լալիս ու տանջւում,
 Դու սարի լանջին խաղեր ես կանչում...
 Վաղո՛ւց, վաղուց ես դու ինձ մոռացել...
 Ես ե՛րբ եմ եկել էստեղ քարացել
 Ու մընում եմ քեզ, մընո՛ւմ, անիրա՛ւ,
 Ինքան մընացի՛ աչքըս ջուր դառաւ
 Ինձ չես լըսում,
 Չես ամստում,
 Էլ չես ասում
 Ինչ կըլնեմ ես...
 Ես կը վառւեմ,
 Հուր կը դառնամ,
 Ես կը հալւեմ,
 Ջուր կը դառնամ,
 Ես չը գիտեմ
 Ինչ կը դառնամ,
 Թէ ո՞ր մին էլ
 Էսպէս մընամ...

Ասում են՝ ուռին
 Աղջիկ էր ինձ պէս,
 Մընում էր եարին,

Ու չեկաւ նա տես :
 Խեղճը դողալով
 Անյոյս կըռացաւ,
 Դարդից չորացաւ,
 Ուռենի դարձաւ :
 Ջրրերի վրայ
 Գլուխը կախած
 Դեռ դողում է նա
 Ու լալիս կամաց,
 Ու ամբողջ տարին
 Մի միտք է անում,
 Թէ եարը եարին
 Ո՛րնց է մոռանում...

— Ա՛խ, Անո՛ւշ, Անո՛ւշ, էդ ի՞նչ ես ասում.

Բա դու չե՞ս լրսում.

Էն, որ լանջերին խաղեր եմ ասում,

Ո՞ւմ հետ եմ խօսում...

Էն, որ գիշերով շըհու¹³ եմ փրչում,

Էն ո՞ւմ եմ կանչում...

Էն, որ մոլորած նըստած եմ մընում,

Ո՞ւմ հետ եմ լինում...

Էն, որ հառաչում ու ախ եմ քաշում,

Էն ո՞ւմ եմ յիշում...

Ա՛խ, Անո՛ւշ, Անո՛ւշ, անաստա՛ծ Անուշ...»

Արբեցա՛ծ, անո՛ւթ

Հառաչեց հովիւն ու սըրտին ընկաւ,

Հալեցա՛ւ, հանդա՛ւ...



— Անո՛ւշ, ա՛յ աղջի՛ր, Անո՛ւշ, տո՛ւն արի...»

Կանչում է մէրը, հառաչում, կանչում :

— Գալիս եմ, գալի՛ս, գալիս եմ, նանի՛ր...»

Ձորից աղջըկայ ձէնն է դողանջում :

¹³ Շիւռ. սրինդ, չուի :

Ու մաղերն անկարգ տրւած թիկունքով
 Ու ցըրւած շիկնած այտերի վրբան,
 Դուրս եկաւ թեթեւ ամպերի տակից
 Անուշը՝ փախած եղնիկի նրման:
 Նա կուժը դատարկ ետ բերաւ կըրկին,
 Իսկ ուսին տարած ուսաշոր չըկայ,
 Թողել է էն էլ ջրբի եղերքին...
 Ա՛խ, անհողութիւն ջահել աղջրկայ...
 — Նանի՛, վախեցի, դանդաւորում է նա,
 Եւ ուղում է լալ, չի կարողանում.
 — Նանի՛, ներքեւում ես մարդիկ տեսայ,
 Կարծեցի՛, թուրքեր էին լողանում...»
 Անիծում է ծեր մէրը բարկացած
 Իրեն մոռացկոտ, վախկոտ Անուշին,
 Ու անէծք տալով իջնում է նա ցած՝
 Դատարկ ետ բերած հին կուժը ուսին:

ԵՐԿՐՈՐԴ ԵՐԳ

Ժ

(Համբարձման առաւօտը)

Համբարձումն եկաւ, ծաղկունքը ալւան¹⁴
 Զուգել են հանդեր նախշուն դորդերով.
 Փունջ-փունջ աղջիկներ սարերը ելան
 Վիճակ¹⁵ հանելու աշխոյժ երգերով:

¹⁴ Ալւան. գունաւոր, կարմիր:

¹⁵ Վիճակը հայ ժողովրդական հին ու գեղեցիկ սովորութիւն մըն է որ տեղի կ'ունենայ Համբարձման տօնին, որպէս թէ անով աղջիկներու ապագայ ընտանեկան վիճակը կը դուշակուի:

Նախընթաց օրը աղջիկներու երամբ դաշտերէ, բլուրներէ եօթը տեսակ ծաղիկ կը հաւաքէ եւ յետոյ զանոնք կը լեցնէ կճուճի (սափորի) մը մէջ՝ ուր եօթը աղբիւրէ ջուր են խառնած: Իրիկունը սափորը կը դրուի բացօթեայ տեղ մը՝ ամբողջ գիշերը աստղերով:

«Համբարձում, եա'յլա,
 Եա'յլա ջան, եա'յլա,
 Սեւ սարեր, եա'յլա,
 Եա'յլա ջան, եա'յլա:

Երգ ու բոյր խառնած,
 Թեւ-թեւի բըռնած
 Զուգում են լեռներ,
 Ծաղիկ են քաղում,
 Ծաղկի հետ խաղում,
 Ինչպէս թիթեռներ:
 Համբարձում, եա'յլա,
 Եա'յլա ջան, եա'յլա,
 Լաւ օրեր, եա'յլա,
 Եա'յլա ջան, եա'յլա:

Եկաւ Համբարձում
 Ծաղկով զարդարւած,
 Մեր բախտին հարցում.
 — Ո՞վ է մեզ գըրւած:

- Ա'յ ջան սըղայ, չորան տըղայ, ո՞ւմն ես գու:
 — Աստուած գիտի, աշխարհ գիտի՝ իմն ես գու:

Դէ հանի'ր, ա'ղջի,
 Վիճակն ի բարին,

Ներդրածութեան ենթարկուելու համար, որուն կ'ըսեն «աստղունք դնել» հետեւեալ օրը վիճակ հանելու, «Զանգիւլիւմ»-ին համար: Յաջորդ օրը երբ կը խմբուին աղջիկները, իւրաքանչիւրը իր յատուկ մէկ առարկան կը նետէ կճուճին մէջ. առջինեկ մը կը սկսի խառնել զանոնք ու ջուրէն հանել մէկիկ մէկիկ՝ մինչ ուրիշ մը երգ մը կ'երգէ իր սրտէն եկած իմաստով. եւ ահա այդ երգն է որ կը գուշակէ վիճակը իւրաքանչիւր աղջկան՝ որուն առարկան կը հանուի: Յետ ամէնքն ալ կարգով երգելու եւ աւարտելու վիճակը՝ կ'երթան իրենց տուները ու հաւաքած հաւ, հաւկիթ, լից (տոլմա) եւն. կ'երթան դաշտերը ու զով աղբիւրներու քով կ'ուտեն ու կը զուարճանան: Տե'ս այս մասին հեղինակին ակնարկները՝ Նախերգանք-ի 3, 4 եւ 5 տուններուն մէջ:

(Խուլբը երգում է)

Աղջի, բախտաւոր,
Երնէ՛կ քու սէրին,
Քու սարի սովոր
Սեւ-սեւ աչքերին:

Համբարձում, եա՛յլա,
Եա՛յլա ջան, եա՛յլա,
Սէր-օրեր, եա՛յլա,
Եա՛յլա ջան, եա՛յլա:

Մեռնեմ դարունքիդ,
Ծաղկած դարուն ես,
Սարի պէս մէջքիդ
Կանգնած եար ունես:

Համբարձում, եա՛յլա,
Եա՛յլա ջան, եա՛յլա,
Սար-եարեր, եա՛յլա
Եա՛յլա ջան, եա՛յլա:

(Անուշը մեմակ)

Ա՛խ, իմ բախտը կանչում է ինձ՝
Ձեմ հասկանում դէպի ուր...
Դողում է սլաղ նըրա ձէնից
Իմ սիրտը սեւ ու տըխուր:

Դուք էլ սարի սիրուն ծաղկունք
Թաքուն մի ցաւ ունիք լուռ,
Աչիկներըդ լիքն է արցունք,
Սիրտներդ սեւ ու տըխուր:

Ա՛խ, ծաղիկներն էս աշխարհքում
Տանջում են միշտ էսպէս զուր,
Տըրորում են ու թառամում
Սիրտները սեւ ու տըխուր:

(Խուսքը հեռուից)

Համբարձում, եա'յլա,
 Եա'յլա ջան, եա'յլա,
 Վառ ցաւեր, եա'յլա,
 Եա'յլա ջան, եա'յլա:

ԵՐՐՈՐԴ ԵՐԳ

ԺԲ

Ձմրան մի գիշեր կար մի հարսանիք,
 Հըրճւում էր անդուսպ ամբոխը գիւղի.
 Գիւղն էին իջել հովիւ պատանիք
 Աղջիկ տեսնելու, պարի ու կոխի:
 Ու պարից յետոյ լէն հըրապարակ
 Բաց արին մէջ տեղն արձակ դըլխատան²³,
 Ձուռնաչին փըչեց կոխի²⁴ եղանակ,
 Ահել ու ջահել²⁵ իրարով անցան:
 Հարա'յ են տալի—«քաշի' հա, քաշի'...»
 Ու դուրս քաշեցին զօռով երկուսին.
 Մինը մեր Սարօն, միւսն Անուշի
 Անդրանիկ եղբայր դառնացած Մօսին:
 Ողջ գիւղը կանգնեց պարըսպի նման,
 Ջոկւեց, բաժանւեց երկու բանակի,
 Ամեն մի բանակն ընտրեց փահլեւան,
 Կանգնեց թիկունքին տըղերանց մէկի:

Գոռում են, զոչում երկու բանակից.
 — Սրտապինդ կացէ'ք, մի' վախէք, տըղե'րք,

²³ Գլխատում. հին նահապետական տան մէջ գլխաւոր սենեակը՝
 երբեք գերաններով եւ երգիքը՝ վերէն (լուսամուտը):

²⁴ Կոխ. զօտեմարտ, ըմբշմարտ:

²⁵ Ահել ու քահել. հասուն հասակ եւ երիտասարդ:

Իսկ նորեկ հարսի փարդի²⁶ քամակից
 Նայում են կանգնած հարսն ու աղջրկերք,
 Ու տաքանում են տըղերքը սաստիկ,
 Փէշերը հաւաք խըրում են դօտին,
 Գետին են զարկում ձեռները հաստիկ,
 Իրար են հասնում թափով մոլեղին...
 Աղաթ կայ սակայն էն մութ ձորերում,
 Ու միշտ հընադանդ հընոց աղաթին,
 Ամբոխի առջեւ իգիթն իր օրում
 Գետին չի զարկիլ ընկեր իգիթին:
 Ու իրար բըռնած Սարօն ու Մօսին
 Քաշում են, ընկնում խողապարկուկի²⁷
 Ընկնում են դետին, ելնում միասին,
 Դրժւար է իբրեւ յաղթել մէկ մէկի:
 Իզուր է գոռում ամբոխը հարբած,
 Զուր սըրտատըրով նայում աղջիկներ,
 Եւ զուր է Անուշն իր շունչը կըտրած,
 Սառել ու կանգնել ինչպէս մի սլառներ:
 Անուշը կանգնած... Սարօն նըկատեց,
 Թունդ առաւ սիրտը ու զարկեց արագ
 Աչքերի առջեւ մըլարը²⁸ սլառեց,
 Մոռացաւ ընկեր, աղաթ ու աշխարհք,
 Ու մինչդեռ Մօսին ընկերախաղի,
 Կատակի տալով թողած էր իրեն,
 Ուժ արաւ Սարօն, ծընկեց կատաղի,
 Գետնեց ընկերին ու չոքեց վըրէն:
 Ամբոխը թափեց հարա-հըրոցով²⁹,
 Վեր թըռցրեց ջահել փահլեւաններին,
 Եւ ուրախութեան աղմուկ գոռոցով
 Յաղթողին փեսի թախտի մօտ բերին:

26 Փարդի (քամակից). վարազոյրին (ետեւէն):

27 խողապարկուկ. դօտեմարտի ժամանակ դիտումնաւոր կե-
 իյնալ կողքի վրայ:

28 Մըլար. մշուշ, խաւար (մթար):

29 Հարա-իրոց. մեծ աղմուկ, աղաղակ:

Յընծութեան ձայնից, ծափերի զարկից
 Շարժւում են դողում պատեր ու օճորք,
 Իսկ նորեկ հարսի փարդի քամակից
 Նայում են կանգնած հարսն ու աղջկերք:

ԺԳ

Վեր կացաւ Մօսին. իրեն կըտրատում,
 — Թող դա՛յ, գոռում է, որ բըռնենք նորից,
 Թէ չէ նամարդը³⁰, արեւս եմ երգւում,
 էլ չի պըրծնելու երբեք իմ ձեռից:
 Վէ՛ր³¹ չի գըցել ինձ... ինձ խաբել է նա...
 Մէյդան բաց արէք, թող մին էլ մէջ դայ...»
 Ու ամեն կողմից ուրախ հըրհըռում:
 Թունալի ծաղրով կանչում են, գոռում,

— Չէ՛լաւ, էգ չէ՛լաւ,
 Վէր չի գըցել դեռ,
 Մօսին թօլ³² էլաւ —
 Խոզապարկուկ էր...
 Հա՛, հա՛, հա՛, տըղե՛րք,
 Շատ էլ լաւ կանի.
 Մէջքը թափ տըւէք,
 Թող մին էլ բըռնի...
 Հա՛, հա՛, հա՛, տըղերք.
 Մէջքը թա՛փ տըւէք...»

ԺԵ

Եւ աղմըկալի հարսանքի տանից
 Դուրս եկաւ Մօսին սաստիկ վիրաւոր.
 Արիւն է կաթում սեւակնած սըրտից,

³⁰ Նամարդ. տմարդի:

³¹ Վէր. վար (համտ. վայր - վէր):

³² Թօլ էլաւ. գլորեցաւ:

Գընում է ըշտապ, քայլերը մոլոր:
 — Ամօ՛թ քեզ, Մօսի՛, թո՛ւք ու նախատինք,
 Ամօ՛թ քեզ նրման գոված իգիթին,
 Ի՛նչպէս վէր ընկար դո՛ւ սարի նրման,
 Մի անունդ յիշիր, մի բոյիդ մըտիկ.
 Դեռ քու թիկունքը չէր տեսել գետին:
 Նրբոր նայում էր ողջ գիւղը կանգնած...
 Դո՛ւ... կուչ դաս տակին Սարօի ծընկան,
 Նըրանից յետոյ երեւաս կանա՛նց...
 Եկա՛ծ էր էս բանն իսկի քու գըլխին...
 Ծաղրատեղ դառար բովանդակ գեղին...
 Դէ մեռիր էլի՛, գետինը մըտի՛ր,
 Տանը վէր ընկիր՝ իլիկ պըտըտիր...»

ԺԵ

— Վա՛յ, վա՛յ, Մօ՛սի ջան, ինձ մի՛ ըսպանիր,
 Սըրանից յետոյ չե՛մ սիրիլ նըրան...
 Վախենում եմ ես... դամէդ տեղը դիր...
 Սիրտըս դողում է տերեւի նըման...»
 Խընդրում էր լալով եղբօր առաջին
 Անդօր ու դալուկ իր քոյրը չոքած,
 Մօսին փայլկըտուն խանչալը ձեռին՝
 Ուզում էր մորթել նրան աչքը բաց:
 — Դէ իմ անունով երգւիր, անըղբա՛մ,
 Որ էլ Սարօին դու չես սիրելու,
 Թէ չէ՝ տեսնո՞ւմ ես խանչալը հանած՝
 Մինչեւ դաստակը սիրտդ եմ խըրելու:
 — Քու ոտի հոգն եմ, Մօ՛սի ջան, Մօ՛սի,
 Դու քու եսիրին³³ երգո՞ւմ ես տալիս...
 Ես էլ Սարօին չեմ սիրում, ասի,
 Տեսնո՞ւմ ես չոքած ի՛նչպէս եմ լալիս...
 — Դու խարո՞ւմ ես ինձ, սուտլի՛կ խաբեբա՛յ.
 Ձե՞ս սիրում ասիր. էն ի՞նչ է հասկա,

³³ Եսիր. (թրք.) գերի:

էն ի՞նչ է հապա, որ տեղն ենք մըտնում՝
 Հեկեկում ես դու գիշերւայ մըթնում.
 Էն ի՞նչ է հապա, որ դու երազում
 «Սարօ Զան, Սարօ՛, Սարօ» ես ասում...
 Մօսի Զան Մօ՛սի, գըլխովըդ շուռ դամ.
 Ինձ մի՛ ըսականիր, ինձ թող էս անդամ.
 Էլ չեմ սիրիլ ես, երբ դու չես ուզում,
 Էլ չեմ կանչիլ ես նըրան երազում...
 Ինձ մի՛ ըսականիր, դամէդ տար հեռու...
 Քու քոյրը չե՞մ ես... իմ Մօսին չե՞ս դու...

ԺԶ

Ու էն հարսանքից թըշնամի դարձան
 Ախպէր տըղերքը էս գէպքի համար.
 Ընկեր, բարեկամ գընացին, եկան,
 Կըրկին հաշտութեան չեղաւ մի հընար:
 Անկոտորում Մօսին էր ո՞ր Մօսին էր,
 Որ՝ աչքը դեռ բաց, էս լուս աշխարհքում,
 Իրեն հարադատ քրոջը տեսնէր
 Նամարդ ընկերի—Սարօի գըրկում,
 Գուցէ գիշերս էլ՝ իր հերսից անքուն՝
 Ուզում է ջահել քըրոջն ըսականի,
 Սարօի անունն ու սէրը թաքուն
 Խանչալի ծէրով սրտիցը հանի:
 Ո՛վ գիտի, գուցէ հէնց էս գիշերն էլ
 Իգիթ ոսոխներն, անհաշտ ու յամառ,
 Մէկմէկու հօտից ոչխար են քըշել,
 Մէկմէկից վըրէժ առնելու համար:
 Կարող է նոյնպէս պատահել յանկարծ,
 Որ մէկի գէղը, արդիւնքը հընձի,
 Գիշերւայ ժամին հըրով բըռնիկած,
 Երկնահաս բոցով աստղերը խանձի:

ՉՈՐՐՈՐԴ ԵՐԳ

ԺԵ

Ամպերը զանդադ ուղտերի նըման
 Նոր են ջուր խըմած ձորից բարձրանում .
 Քարոտ թրկունքից Չաթինդադ լեռան
 Նոր է արեւը պըռուռնող հանում ,
 Գիւղում աղմուկով իրար են անցնում ,
 Կըտեր ծէրերին կանայք հաւաքւած ,
 Տըղերքը դէպի քարափն են վաղում
 Հըրացանների կիսերից բըռնած :

ԺԸ

Եկաւ վիթխարի ծերունի մի մարդ ,
 Կանգնեց վըրդովւած տըղերանց միջին .
 Մատը դէպի ձոր մեկնելով հանդարտ
 էսպէս նա պատմեց զօռ տալով չիբխին :
 — Էս գիշեր , կէսը կըլնէր գիշերւայ ,
 Դեռ չէի կըպցրել աչքըս տեղի մէջ .
 Քունս էլ է կօրել , ջանս էլ էն վաղւայ ,
 Ամեն մի բանից մընացել եմ խեղճ . . .
 Հա' , հալալ կէսը կըլնէր գիշերւայ ,
 Ծունը վերկացաւ էս կըռան³⁴ վրայ .
 Հէյ հէյ կանչեցի , ձէն տըռող չէլաւ .
 Ծունը դադաղեց³⁵ , շունը վեր կալաւ . . .
 Հէյ գիղի , ասի ինքըս իմ միջում ,
 Ի՛նչ է մընացել առաջւան տըղից :
 Քընում էի վաղ մենակ արխաջում³⁶ ,

³⁴ Կուռ (կռան) . կողմ , բազուկ :

³⁵ Գազազել . կատղիլ , զայրանալ :

³⁶ Արխաջ . ոչխարներու մակադատեղ , անասունի հանգստանալու տեղը :

Մի ձէն լըսելիս վեր թըռչում տեղից...
 Էն էի ասում, քընել չէի դեռ.
 Կը լինէր դառը գիշերւան կէսը,
 Երկու մարդկային սեւ կերպարանքներ
 Շան առջեւ փախած՝ ցած իջան դէսը...
 Էս որ լըսեցին, դէս ու դէն ցըրւած
 Տըղերքը ճեպով ձորը ներս մըտան,
 Ու մըտի տակին, ճամբիցը ծըռւած,
 Երկու մարդու թարմ ոտնատեղ գըտան:

ԺԹ

Ամբողջ մի ամիս խումբը զինամառ
 Սարեր ու ձորեր ոտնատակ տըւեց
 Չորան Սարօին գըտնելու համար,
 Որ սարիցն իջաւ Անուշին փախցրեց:
 Մի ամսից յետոյ տըղերքն եկան տուն,
 Գովելով նըրա արարքը ճարպիկ.
 — Հալալ է տըղին, ա՛յ իղիթութիւն,
 Ահա թէ ինչպէս կը փախցնեն աղջիկ:
 Մենակ Անուշի ախպէրը—Մօսին
 Մընաց հանդերում. երդում կերաւ նա,
 Ուր որ էլ լինին՝ նըրանց միասին
 Գըտնի՛ կոտորի, սիրաը հովանայ:
 Մնաց հանդերում: Եւ ահա մի օր,
 Բաղւոր կանանց մէջ, մըթան հետ, թաքուն,
 Շորերը պատռած, տխուր, գըլխակոր
 Անուշը ձորից եկաւ հօրանց տուն:

Ի

— Աղջի՛, Վա՛րդիշաղ, թէ հոգիդ սիրես,
 Մի դարի՛դ գըցիր, տես ինչ է ասում.
 Աչքըս խաւարի, տեսիլք դառնամ ես, —
 Տեսիլ եմ տեսիլ գիշերս երազում:
 Մի մութ ձորի մէջ, մի նեղ ձորի մէջ
 Անբախտ Սարօի ոչխարը կանգնած,
 Լեզու էր առել ու խաղ էր կանչում,

Ու խաղ էր կանչում ձէն ձէնի տըւած...
 Մի դարի՛դ գըցիր, թէ որդով խընդաս,
 էս երազն իսկի ես լաւ չեմ փորձել.
 Ողորմած Աստուած, Քու դուռը բանաս,
 Քու ոտի հողն ենք—Դու ես ըստեղծել...
 Անբան գառները մութ ձորի միջին
 Ուղ էին կանչում ու ձէնով լալիս,
 Սարօի նանն էլ նըրանց առաջին
 Աղլուխ էր առել ու պար էր դալիս...
 — Աղջի՛, Մա՛նիշակ, վատ բան ես տեսել,
 Գարիս էլ, ահա, էնպէս դուրս եկաւ,
 էս չարն, էս բարին... Սարօն է էս էլ...
 Տե՛ս, ահա, Սարօն սեւ ճամբէն ընկաւ...
 Աստուած խընայի ջահել-ջիւանին³⁷,
 Աստուած խընայի իր անբախտ նանին...

ԻԱ.

Ու ման է գալի սարերը ընկած
 Սարօն փախցըրած եղջերւի նըման,
 Օրհասն առաջին, գընդակն ետեւից
 Հանդերը դըժոխք, ընկերը դուշման:

Եւ երբ երեկոն հանդարտիկ ու լուռ
 Սարերից իջնում,
 Նըրա բայաթին³⁸ ողբում է տըխուր,
 Ընկեր սարերին խօսում, գանդատում:

«Բարձր սարեր, ա՛յ սարեր
 Ձէն եմ տալի «վա՛յ», սարե՛ր,
 Դուք էլ ինձ հետ ձէն տըւէք,
 Իմ դարդերի թայ³⁹ սարե՛ր:

³⁷ Զահել-ջիւաճ. երիտասարդ:

³⁸ Բայաթ (բայաթի). երգ, արեւելեան տիւրը եղանակ:

³⁹ Թայ. հաւասար, հասակակից, չափ:

Որս եմ՝ բութէս⁴⁰ ձեզ արած,
 Ձեր ձորերին, ձեզ արած,
 Կուղեմ կորչեմ անդիւման,
 Էս աշխարհքից բէղարած⁴¹:

Կորչեմ բէղար դատարկուն,
 Քար-սարէսար դատարկուն,
 Մեռնեմ պըրծնեմ էս օրից,
 Բալքի առնեմ դադար-քուն:

Ա՛խ կը մեռնեմ՝ ամա նա
 Վա՛յ թէ յանկարծ իմանայ,
 Ես ազատեմ էս ցաւից,
 Աչքը լալով նա մընայ:

Հ Ի Ն Գ Ե Ր Ո Ր Դ Ե Ր Գ

Ի Բ

Լալիս է Անուշն երեսին ընկած,
 Կանգնած են շուրջը կանայք հարեւան,
 Ու խօսք չեն դըտնում ասեն անարգւած,
 Տարած ետ բերած, անբախտ աղջըկան:
 Աստուած խընայեց՝ կոպիտ ախպէրը
 Հեռու հանդերից դեռ տուն չէր դարձել,
 Իսկ խոթողադէմ արեւոր հէրը
 Ըսկաւ փըրփըրած թըքել, անիծել:
 — Դու՛րս գընա, կորի՛, ա՛յ լիբբ, անըզա՛մ,
 Սեւ ու սուգ լինի թադ ու պըսակըդ.
 Կորի՛, չերեւաս աչքիս միւս անգամ,
 Գետինը մըտնի երկար հասակըդ:
 Տեսա՛ր, որ նըրան ատում է Մօսին,

⁴⁰ Բուրէս. ապաւէն, յոյս:

⁴¹ Բէղարած. յողնած:

Չեն ուզում, տեսար, նրբան հէրն ու մէրդ,
 Դու քա՞նի զըլուխ ունիս քո ուսին,
 Որ վեր ես կենում փախչում նրբա հետ»:
 Խոնւած գիւղացիք կըտուրից իջան
 Մեղմելու կոպիտ բարկութիւնը հօր,
 Յայտնուեց նոյնպէս գիւղի քահանան,
 Մի պատկառելի հըսկայ ալեւոր:
 — Դո՛ւրս զընացէք՝ դո՛ւրս, դռնեց տէրտէրը,
 Անուշը թողէք ուղիղն ինձ ասի,
 Թողէք նա յայտնի իր միտքն ու սէրը,
 Նրբանից յետոյ բանը կը պարզի:
 Մի՛ լար, իմ աղջի՛կ, ինձ խոստովանի՛ր,
 Սիրո՞ւմ ես նրբան, քու կամքո՞վ փախար...
 Եթէ սիրում ես՝ էլ դարդ մի՛ անիր,
 Պիտի պրտակեմ ես ձեզ անպատճառ...
 — Ի՞նչ են հառաչում... էն ո՞վ էր, մի տե՛ս,
 Որ դուրսը յանկարծ աղմըկեց էսպէս...
 Ո՞վ է ըսպանել... Մօսի՛ն... ո՛ւմ... ո՛ւր...»
 — Անո՛ւշ, հէ՛յ Անո՛ւշ... ջուր հասցրէ՛ք, ջո՛ւր...

ԻԳ

Ինչպէս մի հեղեղ վեր կենար յանկարծ,
 Երկընքի մըթնած ամպերից իջնէր,
 Ինչպէս փոթորիկ սաստիկ սրընթաց,
 Գիւղից սըլացած մի խումբ կըտրիճներ:
 Յաւից տաքացած էլ բան չեն հարցնում,
 Թըռչում են, ասես ահից հալածւած,
 Ու նրբանց առջեւ ահռելի բացւում,
 Թըշշում է ձորը արիւննով լըցւած:
 Գիւղը դատարկւեց մի աղընթարթում,
 Գարափի զըլխին կանգնած անհամբեր,
 Լո՛ւռ սըրտատըրոփ ականջ են դընում,
 Նայում են ներքեւ... ձէն չի գալիս դեռ...
 Դերեղն է մենակ անդընդում՝ յուզւած՝
 Խըլածայն ողորով սողում գէպի ցած:

ԻԴ

Ու մարդասպանը դուրս եկաւ ձորից,
Դէմքը ալլալլաւ, քայլաւ ժողոր.
Սարսափ է կաթում արնոտ աչքերից,
Եւ կերպարանքը փոխւած է բոլոր:
Առանց նայելու մարդկանց երեսին,
Առանց խօսելու, սեւակնած, դաժան,
Մօտեցաւ սրահին, կախ տըւաւ սընին
Սեւ հըրացանը, սեւ օձի նըման:
Պապանձեց նոյնպէս՝ ամբոխը մեխւած⁴²,
Ոչ ոք ծըպըտալ⁴³ չի համարձակուում,
Մենակ մի հոգի անդուսպ կատաղած,
Հարա՛յ է կանչում, երեսը պոկում:
Մեռած չորանի պառաւ նանն է նա՝
Ցաւից խելագար բառաչում, լալիս.
Տարարա՛խո ծընող, վաղում է ահա,
Զորիցն է տըխուր գողոցը դալիս:

ԻԵ

Սըգաւոր կանայք նըրա ետեւից
Հարա՛յ կանչելով ձորը վազեցին,
Իրենց կորցրածն էլ յիշելով նորից՝
Դիակի շուրջը կարգով շարեցին:
Իգէթին վայել սըրտառուչ ողբով
Լաց ու կոծ արին ձէն ձէնի տըւած:
Տըզերքն էլ մըթին, լուռ ու գըլխակոր,
Մընացին մօտիկ քարերին նըստած:
Ողբացին անշունչ դիակի վըրայ
Անտէր մընացած ոչխարի մասին,
Անխրտ անէծքով յիշեցին նըրա
Անճար մընացած խեղճ եարի մասին:
Եւ նըրա մասին, որ ընկերները

⁴² Մեխւած. դամուած:

⁴³ Ծըպըտալ. նուազ, բարակ ձայն հանել:

Հանդը գընալիս Սարօ կը կանչեն,
 Որ սարից փախած սոված շըները
 Կըտերը պիտի ոռնան, կըլանչեն⁴⁴ :
 Ծանրը չոմբախը, գըլուխը մեխած,
 Օճորքում գըրած պիտի մըրոտի,
 Երկար խանչալը, սլատիցը կախած,
 Պատենում մընայ ու ժանդը սլատի...
 Որ հով սարերի սովորած նանը
 էլ սար չի գընալ առանց Սարօի,
 Սեւ շորեր հագած կը նըստի տանը,
 Անցած օրերը միտը կը բերի:
 Եւ ամեն մի խօսք, մի յիշողութիւն
 Կըտրատում էին սիրտը ծեր նանի,
 Եւ աղաչում էր նա մեռած որդուն
 Մի անգամ խօսի, աչքը բաց անի:
 — Ընչի՞ չես խօսում, ընչի՞ չես նայում,
 Իմ օր ու արեւ, կեանք ու ջան՝ որդի,
 Դու իմ գերեզմանն ընչի՞ ես խըլում,
 Թըշնամի որդի, դաւաճան որդի...»
 Բայց չէին բացւում աչքերը փակւած,
 Շուրթերը սառել, չորացել էին,
 Նըրանց արանքից ատամները բաց
 Սիպտակ շարքերով երևում էին:
 Ու նա կատաղած՝ յանդուդն անէծքով
 Ծառս եղաւ դուշման երկընքի դիմաց,
 Եւ հայհոյում էր, եւ կուրծքը ծեծում,
 Եւ լալիս էին ձէն ձէնի տըւած...
 «Կարմիր արեւից ընկած, Սարօ ջա՛ն,
 Կանանչ տերեւից ընկած, Սարօ ջա՛ն...
 Արեւս հանդաւ, Սարօ ջա՛ն,
 Գիշերս ընկաւ, Սարօ ջա՛ն...»
 Գիշերը ընկաւ, Թանճրացաւ մութը
 Ու նըւաղեցին ձէները տըրտում,
 Յողնեցի՛ն, հանդա՛ն... Մերուկ Դերեղը
 Սըղում էր մենակ խաւար անդընդում:

44 Կլանչել. կաղկանձել:

Սըզւոր դետը
Ծեր Դերեզը,
Սիրտը քրքրած,
Ջուրը փրփրած,
Քարոտ ակին,
Լեռ քարափին
Դեռ ծեծում է,
Հեծեծում է...

ԻԶ

Եւ մի քանի ընկեր-տըղերք
Ջորում, գետի եզերքին,
Փոս փորեցին ու սըրտաբեկ
Հողին տըւին հովւի դին.
Ծառ ու ծաղիկ՝ սըւսըւալով
Բոյր խընկեցին դիւրեկան⁴⁵,
Ծեր Դեւ-բեղն էլ ահեղ ձէնով
Երգեց վըսեմ շարական:
Ու տըղերքը տըխուր ու լուռ
Վերադարձան դէպի տուն,
Ջորում թողած մի սեւ բըլուր,
Մի գերեզման անանուն:

ՎԵՑԵՐՈՐԴ ԵՐԳ

ԻԷ

Գարունը եկաւ, հաւքերը եկան,
Սարեր ու ձորեր ծաղիկներ հագան.
Մի աղջիկ եկաւ, մի մենակ քաղւոր,
Գետի եզերքին շըրջում է մոլոր,

⁴⁵ Դիւրեկան. հեշտալի, անորժեւի:

Շըրջում է մոլոր, խընդում ու լալիս,
Երգեր է ասում ու ման է դալիս:

— Սիրուն աղջիկ, ի՞նչ ես լալիս
էդպէս մենակ ու մոլոր,
Ի՞նչ ես լալիս ու ման դալիս
էս ձորերում ամեն օր,
Թէ լալիս ես՝ վարդ ես ուզում՝
Մայիս կը դայ, մի քիչ կայ,
Թէ լալիս ես՝ եարդ ես ուզում,
Ա՛խ նա գընա՛ց, նա գընա՛ց...
Արտասուելով, լալով էդպէս
Ետ չես դարձնի էլ գերիդ,
Ինչո՞ւ իզուր հանգընում ես
Ջահել կըրակն աչքերիդ:
Նըրա անբախտ շիրմի վըրայ
Պաղ ջուր ածա աղբիւրի,
Դու էլ գընա նոր սէր արա,
Էսպէս է կարգն աշխարհի:

— Շնորհակա՛լ եմ, անցւո՛ր ախպէր,
Աստուած պահի քու եարին.
Ճամբիդ վերջում կանգնած է դեռ
Անուշ ծիծաղն աչքերին...
Ուրախ սըրտով դուք ձեր սէրը
Վայելեցէք անթառամ,
Ինձ արցունք է տըւել Տէրը,
Ես պիտի լամ, պիտի լամ...»

Ու ման է դալիս,
Երգում ու լալիս:
Երգերը անկապ, երգերը տըխուր,
Արցունքի նրման հոսում են իզուր.
Բայց լալիս է նա ու երգեր ասում,
Ու միշտ էն անմիտ տըտունջն է խօսում,
Թէ ինչպէս յանկարծ աշխարքը փոխեց,
Ինչպէս դատարկեց կեանքում ամեն բան,

Սարերը մնացին որը ու անչորան ,
Թէ ինչպէս յանկարծ նա դընաց հեռու ,
էլ չի՛ դառնալու , էլ չի՛ դառնալու...

Ե՛տ դառ , Ե՛տ , իգի՛դ ,
Ետ դառ , անիրա՛ւ ,
Կարօտած եարիդ
Աչքը ջուր դառաւ :
Ոչխարդ էն սարով
Շուռ տուր , տուն արի ,
Փախի՛ր դիշերով
Ու թաքուն արի...

Ա՛խ , էն կանանչ սարի լանջին
Ով է քընած էն տըղէն ,
Վըրէն քաշած սեւ ետիրնջին⁴⁶
Կուռը հանած էն տըղէն...
Ջա՛ն , իմ եարն է , ջանին մեռնեմ ,
Ծաղկի հոտով նա հարբել ,
Սարի լանջին , հովի միջին
Մուշ-մուշ , անուշ մըրափել :

Վե՛ր կաց , վե՛ր , իգի՛թ ,
Վե՛ր կաց , անիրա՛ւ ,
Ոչխարըդ բեր կիթ ,
Օրը ճաշ դառաւ...
Արի՛ , ջա՛ն , արի՛ ,
Քու դալուն մեռնեմ ,
Թուխ չորան , արի՛ ,
Կարօտըս առնեմ...

Տեսէ՛ք , տեսէ՛ք , դափ ու զուռնով
Ի՞նչ հարսնիք է դուրս դալի ,
Մարդիկ ուրախ , թօն ու ձիւնով

⁴⁶ Ետիրնջի. թիկնոց :

Ձի են խաղում, չափ տալի...
 Աղջիկ, աղջիկ, մըտիկ արէ՛ք,
 էս ի՞նչ տեսիլք ես տեսայ.
 Ո՞վ էր տեսել էսպէս հարսնիք —
 Ոչ հարս ունեն, ոչ փեսայ...
 Բերում են հըրէն
 Ամա՛ն, մեր տան դէմ...
 Վէ՛ր դըրէք, վըրէն
 Հիւսերըս քանդեմ...
 Ես էլ եմ դալի՛ս,
 Էդ ո՞ւր էք տանում...
 Ինձ էլ թաղեցէք
 Իր դերեղմանում...

Ա՛խ, չէ՛, ամա՛ն, ասում են դա
 Մի դիակ է լո՛ւռ, հոտած,
 Արիւնը չոր դէմքի վըրայ,
 Աչքերն անթարթ, սիպտակած:
 Նա սիրուն էր, անուշահոտ,
 Աչքերը լի ծիծաղով,
 Նա դալիս էր ցօղոտ, չաղոտ
 Հանաքներով⁴⁷ ու խաղով...

Արի՛, ջա՛ն իգիթ,
 Արի՛, անիրա՛ւ,
 Կարօտած եարիդ
 Աչքը ջուր դառաւ:
 Էլ մի՛ ուշացնի,
 Ես չառ եմ կացել,
 Էլ մի՛ լացացնի,
 Ես չառ եմ լացել...

Տե՛ս, կը խըռովե՛մ,
 Լաց կըլեմ ես է՛լ...

47 Հախախ. կատակ:

Չեմ խօսիլ քեզ հե՛տ...

Չեմ սիրիլ քեզ է՛լ...

ԻԸ

Անլըռելի վըշվըշում է
Պըղտոր ջուրը Դեբեդի,
Նըրա աիին կանաչում է
Մենակ շիրիմն իգիթի:

Նըրա շուրջը հեղ սիրուհին
Թընդացնում է ողբ ու լաց,
Ձէն է տալիս իր Սարօին
Ու պըտըտում մոլորւած:
Ու հոսում է գիշեր-ցերեկ
Արցունքն անբախտ աղջկայ,
Բայց իր սիրած տըղան երբեք
Ձըկա՛յ, չըկայ, ու չըկայ...
Վըշվըշում է դետը — վո՛ւշ, վո՛ւշ,
Ու յորձանք է տալիս յորդ,
Ու կանչում է՝ «Արի՛, Անո՛ւշ,
Արի՛, տանեմ եարիդ մօտ...» —
— Անո՛ւշ, ա՛յ աղջի՛, Անո՛ւշ, տո՛ւն արի...»
Կանչում է մէրը վերեւից, կանչո՛ւմ,
Լո՛ւռ են ձորերը, լո՛ւռ են ահուկի,
Դուշման Դեբեդն է մենակ մըռընչում:

Վուշ-վո՛ւշ, Անո՛ւշ, վուշ-վո՛ւշ, քուրի՛կ,
Վո՛ւշ քու սէրին, քու եարին,
Վուշ-վո՛ւշ, Սարօ, վուշ-վո՛ւշ, իգիթի,
Վո՛ւշ քու սիրած սարերին...

ԻԹ

Համբարձման գիշեր, էն գիւթիչ գիշեր,
Կայ հըրաչալի, երջանիկ վայրկեան.
Բացուում են ոսկի երկընքի դռներ,

Ներքեւ պապանձում, լըռում ամեն բան,
Ու Աստուածային անհաս խորհրդով
Լըցւում բովանդակ Նըրա սուրբ գըթով:

Էն վեհ վայրկեանին չըքնաղ գիշերի՝
Երկընքի անհո՛ւն, հեռու խորքերից
Անմուրաղ մեռած սիրահարների
Աստղերը թըռած իրար են գալիս,
Գալի՛ս՝ կարօտով մի հեղ համբուրում
Աշխարհքից հեռո՛ւ, լաղուր կամարում:

1901-1902

ՍԱՍՈՒՆՅԻ ՌԱԻԻՔԸ

Ա.

Առիւծ-Մըհերը, դարձով դիւցազուն
Քառասուն տարի իշխում էր Սասուն.
Իշխում էր ասեղ, ու նրա օրով
Հաւքն էլ չէր անցնում Սասնայ սարերով:
Սասնայ սարերից շա՛տ ու շատ հեռու
Թընդում էր նրա հըռչակն ահարկու,
Խօսում էր իր փառքն, արարքն անվեհեր.
Հազար բերան էր — մի Առիւծ Մըհեր:

Բ

Էսպէս, ահաւոր առիւծի նրման,
Սասնայ սարերում նըստած էր իշխան
Քառասուն տարի: Քառասուն տարում
«Ա՛խ» չէր քաշել նա դեռ իրեն օրում.
Բայց հիմի, երբ որ եկաւ ծերացաւ,
Էն անահ սիրտը ներս սողաց մի ցաւ:
Սկըսաւ մըտածել դիւցազուն ծերը,
— Հասել են կեանքիս աշնան օրերը,
Շուտով սեւ հողին կերթամ ես դերի,
Կանցնի ծրխի պէս փառքը Մըհերի,
Կանցնեն ե՛լ անուն, ե՛լ սարսափ, ե՛լ ահ,
Իմ անտէր ու որբ աշխարհի վրրայ
Ոտի կը կանգնեն հազար քաջ ու դեւ...

Մի ժառանգ չունեմ՝ իմ անցման ետեւ
 Իմ թուրը կապի, Սասուն պահպանի...
 Ու միտք էր անում հրական ծերունի:

Գ

Մի օր էլ՝ էն դորշ յօնքերը կիտած¹
 Երբ միտք էր անում, երկնքից յանկարծ
 Մի հուր—հրեղէն յայտնուեց քաջին,
 Ոտները ամպոտ կանգնեց առաջին:
 — Ողջո՛յն մեծադօր Սասմայ հրակային,
 Քու ձէնը հասաւ Աստրծու դահին,
 Ու շուտով Նա քեզ մի զաւակ կըտայ:
 Բայց լաւ իմանաս, լեռների՛ արքայ,
 Որ օրը որ քեզ ժառանգ է տըւել,
 Էն օր կը մեռնէք քու կիներն էլ, դու էլ:
 — Իր կամքը լինի, ասաւ Մըհերը.
 Մենք մահինն ենք միշտ ու մահը մերը,
 Բայց որ աշխարհքում ժառանգ ունենանք.
 Մենք էլ նըրանով անմեռ կը մընանք:
 Հըրեշտակն էստեղ ցոլացաւ նորից,
 Ու էս երջանիկ աւետման օրից
 Երբ իննը ամիս, իննը ժամն անցաւ,
 Առիւծ—Մըհերը զաւակ ունեցաւ:
 Դաւիթ անւանեց իրեն կորիւնին,
 Կանչեց իր ախպէր Ձէնով Օհանին,
 Երկիրն ու որդին աւանդեց նըրան,
 Ու կիներն էլ, ինքն էլ էն օրը մեռան:

Դ

էս դարում Մըսրը անյաղթ ու հըզօր
 Մըսրա—Մելիքն էր նըստած թաղաւոր,

1 Կիտել. ամփոփել, հաւաքել:

Հէնց որ խմացաւ՝ էլ Մըհեր չը կայ,
 Կէր կացաւ կըռուով Սասունի վերայ:
 Ձէնով Օհանը ահից սարսափած՝
 Թըշնամու առաջն ելաւ գըլխարաց,
 Աղաչանք արաւ, ընկաւ ոտները.
 — Դու եղիր, ասաւ, մեր գըլխի տէրը,
 Ու քու շըւաքում² քանի որ մենք կանք,
 Գու ծառան լինենք, քու խարջը միշտ տանք,
 Միայն մեր երկիր քարուքանդ չանես
 Ու քաղցըր աչքով մեզ մըտիկ անես:
 — Ձէ՛, ասաւ Մելիք, քու ամբողջ ազգով
 Անց պիտի կենաս իմ թըրի տակով,
 Որ էգուց-էլօր, ինչ էլ որ անեմ,
 Ոչ մի սասունցի թուր չառնի իմ դէմ:
 Ու գընաց Օհան՝ բոլոր-բովանդակ
 Սասունը բերաւ, քաշեց թըրի տակ,
 Մենակ Դաւիթը, ինչ արին-չարին,
 Մօտ չեկաւ դուշման Մելիքի թըրին:
 Եկան քաշեցին՝ թէ զօրով տանեն,
 Թափ տըւաւ, մարդկանց գըցեց դէս ու դէն,
 Փոքրիկ ճըկոյթը մի քարի առաւ,
 Ապառաժ քարից կըրակ դուրս թըռաւ:
 — Պէտք է սպանեմ էս փոքրիկ ծուռին³,
 Ասաւ թագաւորն իրեն մեծերին:
 — Թագաւո՛ր, ասին, դու էսքան հըզօր,
 Թըրիդ տակին է ողջ Սասուն էսօր.
 Ի՞նչ պէտք է անի քեզ մի երեխայ,
 Թէկուզ իր տեղով հէնց կըրակ դառնայ:
 — Դուք դիտէք, ասաւ Մըսրայ թագաւոր,
 Բայց թէ իմ գըլխին փորձանք դայ մի օր,
 էս օրը վըկայ,
 Սըրանից կը դայ:

² Շըւաք. հովանի, հովանաւորութիւն:

³ Մուռ. խենթ:

Ե

Էս որ պատահեց, մեր Դաւիթ հըսկան
 Մի մանուկ էր դեռ եօթ-ութ տարեկան.
 Մանուկ եմ ասում, բայց էնքան ուժեղ,
 Որ նըրա համար թէ մարդ, — թէ մըժեղ:
 Բայց վա՛յ խեղճ որբին աշխարքի վըրայ,
 Թէկուզ Առիւծի կորիւն լինի նա:
 Ձէնով Օհանին ունէր մի չար կին:
 Մին-երկու լըռեց, մի օր էլ կարգին
 Իրեն մարդու հետ սկըսաւ կըռել.
 — Ես մենակ հողի, հաղար ցաւի տէր:
 Ի՛նչ ես ուրիշի եթիմը՝ բերել,
 Նըստեցրել գըլխիս պարապ հացակեր...
 Հո՛ղեմ գըլուխը... ես գերի հօ չե՞մ՝
 Ամենքի քէՔի ետեւից թըռչեմ...
 Մի կուռ կորցըրո՛ւ, կարգի՛ր մի բանի,
 Գընայ իր համար աշխատանք անի...
 Ու հետն սկըսաւ ողբալ ու կոծել,
 Իր օրը սըգալ, իր բախտն անիծել,
 Թէ անբախտ եղաւ աշխարքի միջում,
 Ոչ մի տէր ունի, ոչ մարդն է խըղճում...
 Գընաց Օհանը երեսի ոտի
 Մի զոյգ ոտնաման բերաւ երկաթի,
 Երկաթի մի կոռ⁵ չալակին դըրած,
 Ու արաւ Սասմայ քաղքի դառնարած:

Զ

Քըչեց գառները մեր հովիւ հըսկան,
 Ելաւ Սասունի սարերն աննըման.

«Է՛յ, ջան սարե՛ր
 Սասման սարե՛ր»...

4 Եթիմ. որբ:

5 Կոռ (կոռ). մահակ, հովուի գաւազան:

Որ կանչեց, նրա ձէնից ահաւոր
Դրդորդ—դըմբդըմբոցն ընկաւ սար ու ձոր,
Վայրի գաղաններ բընեցից փախան,
Քարէքար ընկան, դատարկուն եղան:
Դաւիթը ընկաւ նրանց ետեւից,
Որին մի սարից, որին մի ձորից —
Աղւէս, նապաստակ, գէլ, եղնիկ բըռնեց,
Հաւաքեց, բերաւ, գառներին խառնեց,
Իրիկան քըչեց ողջ Սասմայ քաղաք:
Կաղկա՛նձ ու ոռնո՛ց, աղմու՛կ, աղաղա՛կ...
Քաղքըցիք յանկարծ մին էլ էն տեսան՝
Գալիս են հըրէս անհամար գաղան.

«Վա՛յ, հարա՛յ, փախէ՛ք...»

Մեծեր, երեխէք

Սըրտաճաք եղած,

Գործները թողած,

Որը տուն ընկաւ, որը ժամ, խանութ,
Ու ամուր փակեց դուռն ու լուսամուտ:
Դաւիթը եկաւ, կանգնեց մէյդանում.
— Վա՛հ, էս մարդիկը ի՛նչ վաղ են քընում.

Հէ՛յ ուլատէր, հէ՛յ գառնատէր,

Ելէ՛ք, շուտով բացէք դըռներ.

Ով մինն ունէր — տասն եմ բերել,

Ով տասն ունէր — քըսանն արել...

Շուտով ելէ՛ք, եկէ՛ք, տարէ՛ք,

Ձեր գառն ու ուլ գոմերն արէք:

Տեսաւ՝ չեն գալի, դուռ չեն բաց անում.

Ինքն էլ մեկնընց քաղքի մէյդանում,

Գըլուխը դըրաւ մի քարի՝ մընաց

Ու մուշ—մուշ քընեց մինչեւ լուսաբաց:

Լուսին իշխաններ ելան միասին,

Գընացին Ձէնով Օհանին ասին.

— Տո՛ Ձէնով Օհան, տո՛ մահի տարած,

Էս խենթը բերիր, արիր գառնարած,

Ոչ գառն է ջոկում ոչ գէլն ու աղւէս,

Գաղանով լցրեց մեր քաղաքն էսպէս.

Աստուած կը սիրես՝ դի՛ր ուրիշ բանի,
Թէ՛ չէ՛ էս խա՛լիսին՝⁶ լեղաճաք՝ կանի:

Է

Ելաւ Օհանը, Դաւթի մօտ դընաց
— Հօրեղբայր Օհան, հեռո՛ւ եկ, կամա՛ց,
Ուլեր կը փախչեն: — Մին էլ էնտեղից
Մի բօղ նապաստակ, աղանջները ցից,
Խրտնեց ու ահից դուրս պրծաւ յանկարծ:
Դաւիթն էր. ելաւ, ետեւից ընկած
էն սարը քըչեց, ետ բերաւ էս ձոր,
Բերաւ, ուլերին խառնեց նորից նոր:
— Օ՛ֆ, ի՛նչ դժժար է, հօրեղբայր Օհան.
Աստուած օխնել է էն սեւ-սեւ ուլեր,
Ամա բօղալուկ էս ուլեր, որ կան,
Փախչում են, ցըրւում ողջ սարերն ի վեր.
էնքան եմ երէկ վաղել, չարչարե՛լ,
Մինչեւ հաւաքել ու տուն եմ բերե՛լ...
Նայեց Օհանը, որ Դաւթի հաղին
Ոտնաման չի էլ մընացել կարգին,
Մահակն է մաշել, մինչ բուն է հասել,
Մի օրայ միջում էնքան է վաղել:
— Դաւիթ ջան, ասաւ, չեմ թողնի էսպէս,
Բօղալուկ ուլեր չարչարում են քեզ.
էդուց նախիրը կը տանես արօտ:
Ասաւ Օհանը ու միւս առաւօտ
Դընաց, նորից նոր մեր Դաւթի ոտի
Մի ջուխտ նոր տըրեխ բերաւ երկաթի,
Երկաթի մի կոռ հարիւր լրդրական
Ու չինեց Սասմայ քաղքի նախրապան:

⁶ Խալիս. ամբոխ, բազմութիւն:

⁷ Լեղաճաք անի. լեղին ճաթեցնել, սլայթեցնել:

Ը

Քըչեց նախիրը մեր նախորդ հըսկան,
Ելաւ Սասունի սարերն աննըման:

— «է՛յ, ջան սարեր,
Սասմայ սարե՛ր,
Ի՛նչ անուշ է
Ձեր լանջն ի վեր»...

Որ կանչեց, նըրա ձէնից ահաւոր
Դըղորդ — դըմբդըմբոցն ընկաւ սար ու ձոր:
Վայրի գաղաններ բըներից փախան,
Գարէքար ընկան, դատարկուն եղան:
Դաւիթն էր. ընկաւ նրանց ետեւից,
Որին մի սարից, որին մի ձորից,
Գէլ, ինձ, առիւծ, արջ, վաղըր բըռնեց,
Հաւաքեց, բերաւ, իր նախրին խառնեց
Ու առաջն արաւ դէպ Սասմայ քաղաք:
Ոռնո՛ց, մըռնընչի՛ւն, աղմո՛ւկ, աղաղա՛կ...
Վախկոտ քաղքըցիք մին էլ ի՛նչ տեսան,
Հէնց քաղքի վըրայ անհամար գաղան...

— «Վա՛յ, հարա՛յ, փախէ՛ք...»

Մեծեր, երեխէք
Սըրտաճաք եղած,
Գործները թողած

Փախան, ներս ընկան տուն, ժամ կամ խանութ,
Ամուր փակեցին դուռն ու լուսամուտ:

Դաւիթը եկաւ կանգնեց մէյդանում.

Վա՛հ, էս քաղքըցիք ի՛նչ վաղ են քընում:

Հէ՛յ կովատէր, հէ՛յ գոմշատէր,
Ելէ՛ք, չուտով բացէք դըռներ,
Ով մինն ունէր — տասն եմ բերել,
Ով տասն ունէր — քըսանն արել:
Շուտով ելէ՛ք, եկէ՛ք, տարէ՛ք,
Ձեր եղն ու կով գոմերն արէք:

Տեսաւ՝ չեն գալի, դուռ չեն բաց անում,
Ինքն էլ մեկնւեց քաղքի մէյդանում,
Դըլուխը դըրաւ մի քարի, մընաց,

Ու մուշ-մուշ քրնեց մինչեւ լուսաբաց :
 Լուսին իշխաններ ելան միասին ,
 Գընացին Ձէնով Օհանին ասին .
 — Ամա՛ն , քեզ մատաղ , ա՛յ Օհան ախպէր ,
 Մեր եզն ու մեր կով թող մընան անտէր ,
 Միայն սրանից ազատ արա մեզ :
 Ոչ արջն է ջոկում , ոչ դոմէշն ու եզ ,
 Մի օր էս քաղքին փորձանք կը բերի ,
 Արջերոց կանի , կըտայ կաւերի :



Դաւիթ չըգառաւ . մի կըրա՛կ դառաւ :
 Ճարը կըտըրւած՝ Օհանը բերաւ
 Նետ-աղեղ չինեց ու տըլաւ իրեն՝
 Գընայ , որս անի սարերի վըրէն :
 Դաւիթ նետ-աղեղն առաւ Օհանից ,
 Հեռացաւ Սասմայ քաղքի սահմանից
 Ու դառաւ որսկան : Գնաց , մի կորկում⁸
 Լոր էր սպանում , ճնճղուկ էր զարկում ,
 Մըթանը գընում իրեն հօր ծանօթ
 Աղքատ , անորդի մի ծեր կընկայ մօտ ,
 Վիշապի նըման , երկա՛ր , ահադի՛ն
 Մեկնըւում , քընում կըրակի կողքին :
 Մի օր էլ , երբ որ իր որսից դարձաւ ,
 Պառաւը վըրէն սաստիկ բարկացաւ .
 — Վա՛յ Դաւիթ , ասաւ , մա՛հըս տանի քեզ ,
 Դո՞ւ պէտք է էն հօր զաւակը լինե՛ս :
 Ձեռից ու ոտից ընկած մի ծեր կին —
 Ես եմ ու էն արտն Աստըծու տակին .
 Ինչո՞ւ ես գընում , տափում , տըրորում ,
 Իմ ամբողջ տարւան ապրուստը կըտրում :
 Թէ որսկան ես դու — նետ աղեղըդ ա՛ռ ,
 Ծըծմակայ գըլխից մինչեւ Սեղանսար

⁸ Կորկում . կորեկի արտ :

Քու հէրը ձեռին մի աշխարհ ունէր,
Որսով մէջը լի որսի սար ունէր.
Եղնիկ կայ էնտեղ, այծեամ ու պախրա՞.
Կարո՞ղ ես — գընա, էնտեղ որս արա:
— Ի՞նչ ես, ա՛յ պառաւ, էլ ինձ անիծում.
Ես ջահիլ եմ դեռ, ես նոր եմ լըսում:
Ո՞րտեղ է, հապա սարը մեր որսի...
— Գընա՛, հօրեղբայրդ — Օհանը կասի:

Ժ

Հօրեղբօր շէմքում միւս օրը ծէգին
Դաւիթը կանգնեց աղեղը ձեռքին:
— Հօրեղբա՛յր Օհան, ինչո՞ւ չես ասել՝
Իմ հէրը որսի սար է ունեցել,
Այծեամ կայ էնտեղ, եղջերու, կըխտար¹⁰.
Վեր կաց, հօրեղբա՛յր, տար ինձ որսասար:
— Վա՛յ, կանչեց Օհան, էդ քու խօսքը չէր,
էդ ո՞վ քեզ ասաւ, լեղուն պապանձէր:
էն սարը, որդի՛, գընաց մեր ձեռից,
էն սարի որսն էլ գընաց էն սարից,
էլ չկան այծեամ, եղջերու, կըխտար:
Քանի լուսեղէն քու հէրը դեռ կար,
(է՛յ գիդի օրեր — ո՛րտեղ էք կորել),
Ես շատ եմ էնտեղ որսի միս կերել...
Քու հէրը մեռաւ, Աստուած խրոպից,
Մըսրայ թագաւոր զօրքեր Ժողովից,
Եկաւ, մեր երկիր քարուքանդ արաւ,
էս սարի որսն էլ թալանեց տարաւ.
Եղնիկը գընաց, եղջերուն գընաց...
Մեր գիրն էլ հալթաթ էսպէս էր գրած:
Անցել է, որդի, քու բանին գընա,
Մըսրայ թագաւոր ձէնըդ կիմանայ...

9 Պախրա. եղջերու:

10 Կխտար. եղնիկ:

— Մըսրայ թագաւոր ինձ ի՞նչ կանի որ...
 Ես ի՞նչ եմ հարցնում Մըսրայ թագաւոր.
 Մըսրայ թագաւոր թող Մըսրը կենայ,
 Իմ հօր սարերում ի՞նչ դործ ունի նա...
 Վեր կաց, հօրեղբայր, նետ-աղեղդ առ,
 Կապարճըդ կապի՛ր, գընանք որսասար:
 Ելաւ Օհանը ճարը կըտըրւած,
 Գընացին տեսան՝ էլ ի՞նչ որսասար.
 Անտառը ջարդած, պարիսպն աւերած,
 Բուրդերը արած գետնին հաւասար...

ԺԱ.

Գիշերը հասաւ, մընացին էնտեղ:
 Ձէնով Օհանն էր, իր նետն ու աղեղ
 Դըրաւ գլխի տակ, հանգիստ խռովփաց¹¹.
 Դաւիթը մընաց մըտքի ծովն ընկած:
 Մին էլ նկատեց, որ մութը հեռում
 Մի թէժ, փայլիլուն կըրակ է վառում:
 Էն լուսը բռնած՝
 Վեր կացաւ, գընաց,
 Գընաց ու գընա՛ց, բարձրացաւ մի սար,
 Բարձրացաւ, տեսաւ մի մեծ մարմար քար
 Կիսից պատրուած,
 Ու միջից վառւած
 Բըխում է լուսը պա՛րզ, քուլա-քուլա՛,
 Բարձրանում, իջնում ետ քարի վըրայ:
 Վար իջաւ Դաւիթ էնտեղից կըրկին,
 Վար իջաւ, կանչեց Ձէնով Օհանին:
 — Ե՛լ, հօրեղբայր, քանի՞ քընես,
 Ե՛լ, էն պայծառ լուսը մի տես:
 Լուս է իջել բարձըր սարին,
 Բարձր սարին, մարմար քարին:
 Ե՛լ, հօրեղբայր, անուշ քընից.

11 Խռմփալ. խորդալ:

Էն ի՞նչ լուս է բրխում քարից :
 Ելաւ, խաչ քաշեց Օհանն երեսին .
 — Է՛յ, որդի, ասաւ, մեռնեմ իր լուսին ,
 Էն մեր Մարութայ սարն է զօրաւոր :
 Էն լուսի տեղը կանգնած էր մի օր
 Սասմայ ապաւէն , Սասմայ պահապան
 Մեր սուրբ Տիրամօր վանքը Չարխախան :
 Մըշտական , երբ որ կըռիւ էր դընում ,
 Էնտեղ էր քու հէրն իր աղօթքն անում :
 Քու հէրը մեռաւ , Աստուած խըռովեց ,
 Մըսրայ թաղաւոր զօրքեր ժողովեց ,
 Մեր վանքն էլ եկաւ քանդեց էն սարում ,
 Բայց դեռ սեղանից լուս է բարձրանում ...

ԺԲ

Դաւիթը էս էլ երբ որ իմացաւ ,
 — Անո՛ւշ հօրեղբայր , հօրեղբա՛յր , ասաւ ,
 Որբ եմ ու անտէր աշխարքի վըրայ ,
 Հէր չունեմ՝ դու ինձ հէրութիւն արա՛ :
 Էլ չեմ իջնի ես Մարութայ սարից ,
 Մինչեւ չըշինեմ մեր վանքը նորից :
 Քեզանից կուզեմ հինգհարիւր վարպետ ,
 Հինգհազար բանւոր մըշակ նըրանց հետ ,
 Որ գան՝ էս չարաթ կանգնեն ու բանեն ,
 Առաջւան կարգով մեր վանքը շինեն :
 Գընաց Օհանը ու բերաւ իր հետ
 Հինգ հազար բանւոր , հինգհարիւր վարպետ :
 Վարպետ ու բանւոր եկան կանգնեցին ,
 Չըրբիսկ հա թըրը՛սկ , նորից շինեցին ,
 Առաջւան կարգով , փառքով փառաւոր
 Բարձր Մարութայ վանքը Տիրամօր :
 Յըրեւած մխարանք ետ նորից եկան ,
 Նորից թընդացին աղօթք , չարական .
 Ու երբ շէն արաւ հօր վանքը նորից ,
 Յած իջաւ Դաւիթ Մարութայ սարից :

ԺԳ

Համբաւը տարան Մըսրայ Մելիքին .

— Հապա՛ չես ասիլ՝ Դաւիթը կըրկին
Հօր վանքը շինել, իշխան է դառել,
Դու օխտը տարւան խարջը¹² չես առել :

Մելիք զայրացաւ ,

— Գընացէ՛ք, ասաւ ,

Բադին , Կողբադին ,

Սիւդին , Չարխադին ,

Սասմայ քար ու հող տակն ու վեր արէք ,
Իմ օխտը տարւան խարաջը¹³ բերէք :

Քառսուն կոյս աղջիկ բերէք արմաղան¹⁴ ,

Քառսուն կարճ կընիկ , որ երկանք աղան ,

Քառսուն էլ երկար , որ ուղտեր բառնան ,

Իմ տանն ու դըռան զարաւաջ¹⁵ դառնան :

Ու Կողբադին առաւ զօրքեր .

— Գըլխիս վըրայ , ասաւ , իմ տէր .

Գընամ հիմի քանդեմ Սասուն ,

Կանայք բերեմ քառսուն—քառսուն ,

Քառսուն բեռնով դեղին ոսկի ,

Տեղը ջընջեմ Հայոց ազգի :

Ասաւ , Մըսրայ աղջիկ ու կին

Պար բըռնեցին ու երգեցին .

— Մեր Կողբադին գընաց Սասուն ,

Կանայք բերի քառսուն—քառսուն ,

Քառսուն բեռնով ոսկի բերի ,

Մեր ճակատին շարան շարի ,

Կարմիր կովեր բերի կըթան՝

Գարնան շինենք եղ ու չորթան ,

Ջա՛ն Կողբադին , քաջ Կողբադին ,

Սասմայ Դաւթին զարկեց գետին :

12, 13 Խարջ կամ խարաջ. տուրք, ծախս :

14 Արմաղան. բնձայ, պարգև :

15 Ղարաւաջ. աղախին :

Ու Կողբադին փըքւած, ուռած,
 — Շնորհակալ եմ, քոյրե՛ր, դոռաց,
 Էն ժամանակ պիտի պարէք...
 Մինչեւ դալըս դեռ համբերէք,

ԺԴ

Էսպէս երգով,
 Զօռով—զօրքով
 Գոռ Կողբադին մըտաւ Սասուն.
 Օհան լըսեց՝ կապւեց լեզուն:
 Աղ ու հացով,
 Լաց ու թացով
 Առաջն ելաւ,
 Խընդիրք արաւ.
 — Ինչ որ կուզես՝ առ, տա՛ր, ամա՛ն.
 Վարդ աղջիկներ, կանայք Սասման,
 Դառը դադած¹⁶ դեղին ոսկին,
 Միայն թէ դըթա մեր խեղճ աղդին,
 Մի՛ կոտորիր, մի՛ տար մահու,
 Վերեւ՝ Ասուած, ներքեւը՝ դու...
 Ասաւ, բերաւ շարան—շարան
 Վարդ աղջիկներ, կանայք Սասման:
 Ու Կողբադին կանգնեց, ջուկեց,
 Մարազն արաւ, դուռը փակեց,
 Քառսուն կոյս աղջիկ, սիրուն արմաղան,
 Քառսուն կարճ կընիկ, որ երկանք աղան,
 Քառսուն էլ երկար, որ ուղտեր բառնան,
 Մըսրայ Մելիքին դարաւաշ դառնան:
 Դէզ—դէզ կիտեց դեղին ոսկին.
 Սեւ սուգ կալաւ Հայոց աղգին:

16 Դադած. չահած:

ԺԵ

Հէ՛յ, ո՞ւր ես, Դաւիթ, Հայոց պահապան,
 Քարը պատըռւի — դո՛ւրս արի մէյդան:
 Քանդած հօր վանքը որ շինեց նորից,
 Յած իջաւ Դաւիթ Մարութայ սարից,
 Ժանդոտած, անկոթ մի շեղբիկ դըտաւ,
 Դընաց՝ պառաւի շաղկամը մըտաւ.
 Պառաւն էր եկաւ՝ անէ՛ծք, աղաղա՛կ.
 — Վա՛յ, խելա՛ռ Դաւիթ, շաղկամի տեղակ
 Դու կըրակ ուտես, ցաւ ուտես, ասաւ,
 Քու աչքն աշխարքում մենակ ի՞նձ տեսաւ.
 Կորեկըս արիւր դետնին հաւասար,
 Էս էր մընացել ձմեռւան պաշար,
 Էս էլ կըտրում ես,
 Էլ ո՞նց ապրեմ ես:
 Թէ կըտրիճ ես դու, աղեղ ա՛ռ, գընա՛,
 Քու հօր աշխարքին տիրութիւն արա՛,
 Քու հօր դանձը կե՛ր,
 Թողել ես անտէր,
 Մըսրայ թաղաւոր ղըրկել է՝ տանի:
 — Էլ ի՞նչ ես վըրէս բարկանում, նանի՛.
 Էդ ի՞նչ ես ասում, ես չեմ հասկանում,
 Մըսրայ թաղաւոր մեր ի՞նչն է տանում...
 — Մըսրայ թաղաւոր քո ի՞նչն է տանում...
 Մըսրայ թաղաւոր քու աչքն Բ հանում,
 Դանդալօ՜ւ¹⁷ Դաւիթ. ղըրկել է հըրէն,
 Եկել են Սասմայ քաղաքի վըրէն
 Բաղին, Կողբաղին,
 Սիւղին, Չարխաղին,
 Թաւան են տալի բովանդակ Սասում.
 Քառսուն բեռ ոսկի խարաջ են ուղում,
 Քառսուն կոյս աղջիկ սիրուն, արմաղան,
 Քառսուն կարճ կընիկ, որ երկանք աղան,

17 Դամդալօւ. անշնորհք, ախմար մարդ:

Քառասուն էլ երկար, որ ուղտեր բառնան,
 Մըսրայ Մելիքին դարաւաշ դառնան:
 — Ի՞նչ ես, ա՛յ պառաւ, էլ ինձ անիծում.
 Յոյց տուր մի տեսնեմ — ո՞րտեղ են ուղում:
 — Ո՛րտեղ են ուղո՞ւմ... Մահըս տանի քե՛զ.
 Դո՛ւ պէտք է էն հօր դաւակը լինե՛ս...
 Եկել ես՝ էստեղ չաղգամ ես լաւում...
 Ոսկին՝ Կողբաղին ձեր տանն է չաւում,
 Աղջիկներ փրլեկ¹⁸ մարազն են լըցրած:
 Շաղգամը թողեց Դաւիթ ու դընաց:
 Տեսաւ՝ Կողբաղին իրենց տան միջին
 Չաւում է ոսկին թեղած¹⁹ առաջին,
 Սիւդին, Չարխաղին պարկերն են բռնել,
 Ձէնով Օհանն էլ չըլինքը²⁰ ծրռել,
 Կանգնել է հեռու, ձեռները ծոցին:
 Տեսաւ, աչքերը արնով լըցւեցին:
 — Վե՛ր կաց, Կողբաղին. հեռո՛ւ կանգնիր դու,
 Իմ հօր ոսկին է — ես եմ չաւելու:
 — Կողբաղին ասաւ. — է՛յ, Ձէնով Օհան,
 Կըտաս — տո՛ւր խարջը էս օխտը տարւան,
 Թէ չէ՝ կը դընամ, միրուքս վըկայ,
 Մըսրայ-Մելիքին կը պատմեմ, կը դայ,
 Ձեր Սասմայ երկիր քար ու քանդ կանի,
 Տեղը կը վարի, բօստան կը ցանի:
 — Կորէ՛ք, անղգամ դուք Մըսրայ չըներ,
 Բա չէ՞ք իմացել դուք Սասմայ ծրռեր...
 Մեռա՞ծ էք կարծում դուք մեղ, թէ՞ չըւաք²¹,
 Կուղէք մեր երկիր դընէք խարջի տա՛կ...
 Բարկացաւ Դաւիթ, չափը չըպըրտեց,
 Տըւաւ Կողբաղնի գլուխը ջարդեց,
 Չափի փշրանքը պատն անցաւ, դընաց,
 Մինչեւ օրս էլ դեռ դընում է թըռած:

18 Փլիկ կամ փլեկ. փուլ եկող, խարխուլ չէնք:

19 Թեղ. հաւաքել, կոյտ կազմել:

20 Ելիմֆը ծռել. նեղութեան մէջ իյնալ:

21 Շւաք. խաւարած, մո՞ւլ:

Ու ելան՝ թափած ոսկին թողեցին,
Հայոց աշխարքից փախան դընացին
Բաղին, Կողբադին,
Սիւղին, Չարխադին:

ԺԶ

— Վա՛յ, վա՛յ, հօրեղբա՛յր, ի՛նչ ասեմ ես քեզ.
Մենք ունենք էստեղ դեղին ոսկու դէզ,
Դու արել ես ինձ քաղաքի ծառան,
Դու թողել ես ինձ օտարի դըռան...
Հօրեղբայրն ասաւ. — Այ խենթ, խելադար,
Ոսկին պահել եմ Մելիքի համար,
Որ քաղցըր լինի աչքը մեզ վըրայ:
Չըտըիր, հիմի որ զօրք առնի՝ դայ,
Մասմայ քար ու հող հեղեղի, տանի,
Ո՞վ դէմը կերթայ, ո՞վ կըռիւ կանի:
— Դու կա՛ց, հօրեղբա՛յր, թող դայ, ե՛ս կերթամ,
Կերթամ, ես նըրան պատասխան կըտամ:
Ու մութ մարադի դըռանը զարկեց,
Փակած աղջիկներ հանեց, արձակեց:
— Գընացէ՛ք, ասաւ, ազատ ապրեցէ՛ք,
Սասունցի Դաւթին արեւ խընդրեցէ՛ք:

ԺԷ

Էսպէս ջարդւած, արիւնլըւայ
Փախան, ընկան հողը Մըսրայ
Բաղին, Կողբադին,
Սիւղին, Չարխադին:
Մըսրայ կանայք հեռւից տեսան,
Հեռւից տեսան, ուրախացան
Ու ծափ տըւին կըտերներին.
— Եկա՛ն, եկա՛ն, բերի՛ն, բերի՛ն...
Մեր Կողբադին դնաց Սասուն,
Կանայք բերաւ քառսուն—քառսուն,
Կարմիր կովեր բերաւ կըթան՝

Գարնան շինենք եղ ու չորթան...

Հէնց մօտեցան, նըկատեցին,
Ծափ ու խընդում ընդհատեցին,
Քըրքըջացին

Ու կանչեցին.

— Է՛յ, Կողբադին մեծարերան,
Էդ ո՞րտեղից լերան-լերան,
Լերան-լերան կըզաս փախած,
Հաստ գըլուխըդ կիսից ճըղած²² :
Էն դո՞ւ հասիր՝ գընամ Սասուն,
Կանայք բերեմ քառսուն-քառսուն,
Քառսուն բերնով ոսկի հանեմ,
Հայոց երկիր աւեր անեմ :

Գացիր Սասուն քանց գէլ զաղան,
Ետ ես գալի քանց շուն վաղան...

Ու Կողբադին խիստ բարկացաւ.

— Սո՛ւս կացէք դուք, լըրբե՛ր, առաւ.

Ձեր մարդիկն էք տեսել դուք դեռ,

Դուք չէք տեսել Սասմայ ծըռեր :

Սասմայ ծըռեր լերան-լերան,

Նետեր ունեն մի-մի գերան.

Սասմայ երկիր քար ու կապան²³,

Դըժար սարեր, ձոր ու ծապան²⁴.

Նըրանց խոտեր — ինչպէս կեռ թուր,

Զօրք ջարդեցին երեք հարիւր...

Ասաւ ու էլ հառաւ դադար,

Վըռադ-վրոադ, գըլխապատառ

Վաղեց իրեն թաղաւորին :

Խընդաց թաղւորն իր աթոռին :

— Ապրե՛ս, ապրե՛ս, քաջ Կողբադին,

²² ձղել. ճեղքել, պատռել :

²³ Քար ու կապան. քարուտ, ժայռոտ տեղեր, նեղ ճամբաներ :

²⁴ (Ձոր ու) ծապան. բնական կամ արհեստական սանդղաձեւ անոցներ, նեղ տափարակներ՝ ուր կը տնկեն ծառեր կամ բանջարանոցներ, զեւանդ (terrasse) :

Արժէ՛ կախեմ ես քու ճշտին
 Մեր ղուզղունի²⁵ մեծ նըշանը —
 Պարզեւ քու մեծ յաղթութեանը:
 Ո՞ւր են, հապա առաջս բեր
 Սասմայ ոսկին ու աղջիկներ:
 Ասաւ Մելիք, ու Կողբադին.
 Գըլուխ տըւաւ մինչեւ դետին.
 — Ապրա՛ծ կենաս, մեծ թագաւոր,
 Զօռով փախայ ես ձիաւոր,
 Ո՞նց բերէի Սասմայ ոսկին:
 Մի խենթ ծընեց Հայոց աղդին,
 Ոչ ահ գիտի, ոչ տէր ու մեծ,
 Գըլուխս էսպէս տըւաւ, ջարդեց.
 «Չե՛մ տալ, ասաւ, իմ հօր ոսկին:
 Չե՛մ տալ կանայքն իմ հայ աղգին,
 Սասմայ երկիր ձեզ տեղ չըկայ...
 Քու թագաւոր, ասաւ, թո՛ղ դայ,
 Թող դայ՝ ինձ հետ կըռիւ անի,
 Թէ ղոչաղ է՝ զօռով տանի»:
 Կատաղեց, փըրփըրաց Մըսրայ թագաւոր.
 — Կանչեցէ՛ք, ասաւ, իմ զօրքը բոլոր.
 Հազար հազար մարդ նորելուկ մանուկ,
 Հազար հազար մարդ անբեխ, անմօրուք,
 Հազար հազար մարդ բեխը նոր ծըլած,
 Հազար հազար մարդ նոր թախտից ելած,
 Հազար հազար մարդ թուխ միրուքաւոր,
 Հազար հազար մարդ սիպտակ ալեւոր,
 Հազար հազար մարդ, որ փողեր հընչեն,
 Հազար հազար մարդ, որ թմբուկ զարկեն...
 Կանչեցէ՛ք, թող դան, հազնեն զէ՛նք, զըրա՛հ,
 Կըռիւ տի գընամ ես Դաւթի վըրայ,
 Սասունն աւերեմ,
 Հեղեղեմ, բերեմ:

25 Ղուզղուն. արծիւ:

ԺԸ

Էսպէս անհամար զօրքեր հաւաքեց,
 Եկաւ Սասմայ դաշտ, բանակը դարկեց
 Ու ծանրը նըստեց Մըսրայ թաղաւոր:
 Էնքան ահագին բաղմուժիւնն էն օր
 Բաթմանայ ջրըին եկաւ ու չոքեց,
 Ուլ եկաւ, խըմեց — դետը ցամաքեց,
 Սասմայ քաղաքում մընացին ծարաւ:
 Ձէնով Օհանին դարմանքը տարաւ:
 Գուրքը ուսն առաւ, սարը բարձրացաւ.
 Սարը բարձրացաւ, տեսաւ, ի՞նչ տեսաւ:
 Ճերմակ վըրանից դաշտը ճերմակել,
 Ասես՝ էն գիշեր ճըմեռը եկել,
 Սպիտակ ձիւնով պատել էր Սասուն:
 Լեզին ջուր կտրեց, կապ ընկաւ լեզուն,
 Հարա՛յ կանչելով, փախաւ, տուն ընկաւ.
 — Վա՛յ, փախէ՛ք, եկա՛ւ... հա՛յ, հարա՛յ, եկաւ...
 — Ի՞նչը, հօրեղբա՛յր, ի՞նչը, ի՞նչն եկաւ...
 — Յաւն ու կըրակը Դաւթի պինչն²⁶ եկաւ:
 Մըսրայ թաղաւոր ելել է, եկել,
 Եկել, մեր դաշտին բանակ է դարկել.
 Թիւ կայ աստղերին, թիւ չկայ զօրքին...
 Վա՛յ մեր արեւին, վա՛յ մեր աշխարքին...
 Ե՛կ, ոսկին տանենք, աղջիկներ տանենք:
 Չօքենք առաջին, պաղատանք անենք,
 Գոնցէ թէ՛ դըթայ,
 Մեզ սըրի չըտայ...
 — Դու կա՛ց, հօրեղբա՛յր, դու դարդ մի՛ անիր.
 Գընա՛, քու օդում դու հանգիստ քընիր.
 Հիմի ես կելնեմ, Սասմայ դաշտ կերթամ.
 Մըսրայ—Մելիքին պատասխան կըտամ:
 Ու դընաց Դաւթի ծանօթ պառաւին.
 — Նանի ջա՛ն, ասաւ, ժանդոտած ու հին

26 Պիմչ. քթի ծակ, ունդ:

Երկաթի կըտոր, անթարոց²⁷, շամփուր,
 Ինչ ունես չունես՝ հաւաքի՛ր, ինձ տուր,
 Մի էշ էլ գըտիր, որ վըրէն նըստեմ,
 Կըռիւ տի գընամ Մըսրայ զօրքի գէմ:
 — Վա՛յ, Դաւիթ, ասաւ, մահս տանի քեզ.
 Դո՞ւ պէտք է էն հօր զաւակը լինե՛ս...
 Քու հէրն ունէր կըռւի համար
 Հըրեղէն ձի, ոսկի քամար²⁸,
 Ծալ ծալ կապէն²⁹, գուռղը³⁰ պողպատ,
 Թամբ սաղափէն, կուռ սաղաւարտ,
 Խաչ պատրաստին իր քաջ բազկին,
 Զըրահ շապիկ, թուր-Կէծակին,
 Դու եկել ես, ա՛յ խենթ ու ծուռ,
 Ինձնից կուղես էշ ու շամփո՛ւր...
 — Ամա՛ն, նանի՛, չեմ լրսել դեռ:
 Ո՛ւր են հիմի իմ հօր գէնքեր:
 — Հօրեղբօրդ գընա հարցուր.
 Ո՛ւր են, ասա, հանի՛ր, բեր, տուր:
 Բան է, թէ որ չըտայ սիրով,
 Աչքը հանիր՝ խըլիւր զօռով:

ԺԹ

Դաւիթ գընաց հօրեղբօր մօտ.
 — Է՛յ հօրեղբայր, կանչեց հերսոտ,
 Իմ հէրն ունէր կըռւի համար
 Հըրեղէն ձի, ոսկի քամար,
 Ծալծալ կապէն, գուռղը պողպատ,
 Թամբ սաղափէն, կուռ սաղաւարտ,
 Խաչ պատրաստին իր քաջ բազկին
 Զըրահ շապիկ, թուր Կէծակին,
 Կըտաս — բեր տուր...»

²⁷ Անթարոց. երկաթ՝ որով թոնիրը կամ փուռը կը խառնեն:

²⁸ Քամար. գօտի (կամար մէջքի):

²⁹ Կապէն. զգեստ, կապայ:

³⁰ Գուռղ (գուրգ, գիւրգ). լախտ, մկունդ:

— Վա՛յ, Դաւիթ ջա՛ն,
Ահից գոռաց Ձէնով Օհան.
Քու հօր մահւան տարուց — օրից
Դուրս չեմ հանել ձին ախոռից,
Ոչ սընդուկից Թուր-Կայծակին,
Ձըրահ շապիկ, ոսկի դօտին...
Ինձ Թող, ամա՛ն, մի՛ սպանիր,
Կուգես — հըրէն, զընա հանի՛ր:

Ի

Հագաւ Դաւիթ զէնք ու զըրահ,
Կապեց դօտին, Թուր-Կայծակին,
Խաչն էլ իր յաղթ բազկի վըրայ,
Ելաւ, հեծաւ Առիւծ հօր ձին,
Հօր ձին հեծաւ ու մըտրակեց.
Ձէնով Օհան լալով երգեց.
— Ափսո՛ս, հազա՛ր ափսոս հըրեղէն մեր ձին,
Ա՛խ, հըրեղէն մեր ձին.
Ափսո՛ս, հազա՛ր ափսոս մեր ոսկի դօտին,
Ա՛խ, մեր ոսկի դօտին.
Ափսո՛ս, Թանկ կապէն, որ հագին տարաւ,
Ա՛խ, որ հագին տարաւ...

Դաւիթ բարկացաւ,
Ձին քշեց, դարձաւ,
Օհանը վախեց,
Իր երգը փոխեց.
«Ափսո՛ս, նորելուկ Դաւիթըս կորաւ,
Ա՛խ, Դաւիթըս կորաւ:»

Էս որ իմացաւ,
Դաւիթ մեղմացաւ,
Իջաւ, Օհանի ձեռքը համբուրեց:
Ձէնով Օհանն էլ, ինչպէս հայր ու մեծ,
Օրհնեց, խըրատեց նըրան հայրաբար,
Դէպի Սասմայ դաշտ դըրաւ ճանապարհ:

ԻԱ

Սասունցի Դաւիթին ունէր մի քեռի,
Անունը Թորոս, ահեղ աժդահա:
Սա էլ իմացաւ համբաւը կըռւի,
Մի բարդի ուսին դալիս է ահա:
Գալիս է՝ հեռւից բարձրը դողալով.
— Ի՛նչ էք վեր եկել էս դաշտի միջում,
Քանի գըլիսանի մարդիկ էք կամ ո՞վ,
Սասունցի Դաւիթին որ չէք ճանաչում...
Բա չէ՞ք իմանում, որ էստեղ է նա
Գալու՝ խաղացնի իր ձին թեւաւոր,
Ձըքեցէ՛ք³¹, հիմի ուր որ է՝ կըգայ,
Եկել եմ սըրբեմ մէյդանը էսօր:
Ասաւ ու քաշեց իր ուսի բարդին,
Սըրբեց բանակից մի քըսան վըրան...
Դաւիթն էլ ահա սարի դադաթին
Կանգնած՝ դողում է վիշապի նըման.
— Ով քնած էք՝ արթուն կացէ՛ք,
Ով արթուն էք՝ ելէ՛ք, կեցէ՛ք.
Ով կեցել էք՝ զէնք կապեցէ՛ք,
Ձէ՛նք էք կապել՝ ձի թամբեցէ՛ք,
Ձի էք թամբել՝ ելէ՛ք. հեծէ՛ք.
Յետոյ չասէք՝, թէ մենք քընած —
Դաւիթ դող-դող եկաւ, գընաց...
Էսպէս կանչեց, ասպանդակեց,
Ու, ինչ ամպից կայծակ դարկի,
Մըսրայ զօրքի մէջ տեղ դարկեց,
Շողացնելով Թուր-Կայծակին:

Ջարդեց, փըշրեց մինչեւ կէսօր.
Կէսօր արինն ելաւ հեղեղ,
Քըշեց, տարաւ հաղարաւոր
Մարդ ու դիակ ողջ միատեղ:

31 Ձփել. երթալ կորսուիլ, հեռանալ:

Կար զօրքի մէջ մի ալեւոր,
Աշխարհ տեսած ու բանադէտ.
— Տըղե՛րք, ասաւ, ճամբայ տըւէք,
Գընամ խօսեմ ես Դաւթի հետ:

Գընաց՝ կանգնեց Դաւթի առաջ,
Էսպէս խօսեց էն ծերունին.
— Դալար կենա՛, կուռըք³², ո՛վ քաջ,
Սուրբդ կըտրուկ միշտ քու ձեռին:

Մի ծերունուս խօսքին մըտիկ,
Տե՛ս, քու խելքը ինչ է կըտրում:
Ի՞նչ են արել քեզ էս մարդիկ,
Հէ՞ր ես սըրանց դու կոտորում:

Ամեն մինը մի մօր որդի,
Ամեն մինը մի տան ճըրաղ,
Որը կինն է թողել էնտեղ
Աչքը ճամբին, խեղճ ու կըրակ,

Որը մի տուն լիք մանուկներ,
Որը ծընող աղքատ ու ծեր,
Որը լացով, քօղն երեսին
Նորապըսակ ջահիլ հարսին...

Թագաւորը դուռով — թըրով
Հաւաքել է, էստեղ բերել:
Խեղճ մարդիկ ենք՝ պակաս օրով,
Մենք քեզ վընաս ի՞նչ ենք արել:

Թագաւորն է քու թշնամին,
Կըռիւ ունես — իր հետ արա,
Հէ՞ր էս քաջում թուր-Կայծակին
Էս անճարակ խալիսի վըրայ:

— Լաւ ես ասում դու, ծերունի՛,
Ասաւ Դաւիթն ալեւորին,
Բայց թաղաւորն ո՞ւր է հիմի,
Որ սեւ կապեմ նըրա օրին:

— Մեծ վըրանում քնած է նա,
Է՛ն, որ միջից ծուխը կելնի.
Էն ծուխն էլ հօ ծուխ չի որ կայ,
Գոլորչին է իր բերանի:

Ասին. դէպի մեծ վըրանը
Ասպանդակեց Դաւիթն իր ձին,
Քըչեց, գընաց ու դռանը
Գոռաց կանգնած արարներին

— Ո՞ւր է, ասաւ, ի՛նչ է կորել
Դուրս կանչեցէ՛ք, դայ ասպարէզ,
Թէ մահ չունի՝ մահ եմ բերել,
Գըրող չունի՝ գըրողն եմ ես...

— Մելիքն, ասին, քուն է մըտել,
Օխտը օրով պէտք է քնի.
Երեք օրն է դեռ անցկացել,
Չորս օր էլ կայ, քունը առնի:

— Ի՛նչ, բերել է աղքատ ու խեղճ
Խալխին լըցրել ծովն արիւնի,
Ինքը մըտել վըրանի մէջ՝
Օխտը օրով հանդիստ քնի՛...

Քընել-մընել չեմ հասկանում,
Վե՛ր կացրէք շո՛ւտ, դուրս դայ մէյդան,
Էնպէս դըրան ես քընացնեմ,
Որ չը դարթնի էլ յաւիտեան:

— Ելան՝ մարդիկ ճարահատած
Շամփուր դըրին թէժ կըրակին
Ու դարկեցին խոր մըրափած
Մըսրա-Մելքի բաց կըրնկին:

— Օ՛Ք, էլ հանդիստ քուն չունի մարդ
 էս անիծւած լըւի՝ ձեռից,
 Խոր մըռնչաց հըսկան հանդարտ
 Ու շուռ եկաւ, քընեց նորից:

Ելան, բերին մեծ դութանի
 Խոփը՝ դըրին թէժ կըրակին,
 Ու կաս-կարմիր, կէծկըծալի,
 Շիկնած տըւին մերկ թիկունքին:

— Օ՛Ք, էլ հանդիստ քուն չունի մարդ
 էս անիրաւ մոծակներից.
 Աչքը բացաւ հըսկան հանդարտ,
 Ուզում էր ետ քընել նորից,

Տեսաւ՝ Դաւթին: Գլուխն ահեղ
 Վեր բարձրացրեց մըռնչալով,
 Փըչեց վըրէն, որ թըռցընի
 էն աժդըհին մի փըչելով:

Տեսաւ, տեղից ժաժ չի գալի,
 Ձարմանքն ու ահ պատեց հողին:
 Արնոտ աչքերն ըսպառնալի
 Յառեց խոժոռ Դաւթի աչքին:

Նայեց թէ չէ, դգաց՝ իր մէջ
 Տասը դոմչի ուժ պակասեց:
 Պառկած տեղից վրայ նստեց
 Ու ժպտալով հետը խօսեց.

— Բարով, Դաւիթ, յողնած ես դեռ.
 Ե՛կ, մի նստի՛ր, խօսենք կարգին,
 Յետոյ դարձեալ կըռիւ կանենք,
 Եթէ կըռիւ կուզես կըրկին...

Իր վըրանում բըռնակալը
 Քառսուն դազ³³ խոր հոր էր փորել,

³³ Գազ. կանգուն (չափ):

Ցանցով փակել մութ բերանը,
Վըրէն փափուկ խալի փըռել:

Ում որ յաղթել էէր կարենում,
Շողումելով կանչում էր նա,
Նըստեցնում էր իր վըրանում
էն կորստեան հորի վըրայ:

Իջաւ Դաւիթ ձիուցը ցած,
Գընաց, նըստեց... ընկաւ հորը:
— Հա', հա', հա', հա', քահ-քահ խընդաց
Մըսրայ դաժան թաղաւորը:

— Դէ, թող հիմի գընա՝ խաւար
Հորում փըթի, էնքան մընայ:
Ու ահագին մի ջաղացքար
Բերաւ, դըրաւ հորի վըրայ:

ԻՅ

Քընեց էն գիշեր Ձէնով Օհանը:
Գիշերն երազում երեւաց ծերին՝
Մըսրայ երկընքում արեւ ճառագած,
Սեւ ամպ էր պատել Սասմայ սարերին:

Սաստիկ վախեցած վեր թըռաւ տեղից:
— Վա՛յ, կընի՛կ, ասաւ, մի ճըրադ արա՛,
Գընա՛ց մեր անխորձ Դաւիթը ձեռից,
Սեւ ամպ էր իջել Սասունի վըրայ:

— Հողե՛մ դըլուխդ, ասաւ կընիկը,
Ո՛վ դիտի՛ Դաւիթն ո՛ւր է քէՖ անում...
Դու էլ քեզ համար քու տանը ընկած՝
Ուրիշի համար երազ ես տեսնում

Քընեց Օհանը: Վերկացաւ դարձեալ.
— Կընի՛կ, Դաւիթը նեղ տեղն է ընկած.
Մըսրայ վառ աստղը շողում էր պայծառ
Մեր աստղը հիւանդ ցուքում դալկացած:

— Ի՞նչ եղաւ քեզ, մա'րդ, գիշերաւն կիսին.
Բարկացաւ վըրէն կընիկն աղմուկով:
Խաչ քաշեց էլ ետ Օհանն երեսին,
Շուռ եկաւ, քընեց խըռոված հոգով:

Մի ուրիշ պատկեր աւելի ահեղ
Տեսաւ՝ երկընքի բարձըր կամարում
Վառուում էր Մըսրայ աստղը փառահեղ,
Սասմայ աստղիկը սուղւեց խաւարում:

Ջարթնեց վախեցած: — Տունըդ քանդւի, կի՛ն,
Ես ո՛րնք լըսեցի քու էդ կարճ խելքին.
Կորաւ մեն մենակ մեր ջահիլն անտէր.
Վե՛ր կաց, շո՛ւտ արա, գէնքերըս մի բե՛ր...

ԻԳ

Ելաւ Օհան, դոմը մըտաւ,
Ջարկեց ճերմակ ձիու մէջքի՛ն.
— Է՛յ, ճերմակ ձի, մինչ ե՞րբ, ասաւ,
Կը հասցընես Դաւթի կըռւին:

«Մինչեւ լուսը կը հասցնեմ».
Ու ձին տըւաւ փորը դետին.
— Մէջքդ կոտրի՛, լուսն ի՞նչ անեմ.
Լաշին³⁴ հասնեմ ես թէ՛ նաշին³⁵:

Կարմիր ձիու մէջքին զարկեց.
Սա էլ երես փորը դետին.
— Ջա՛ն կարմիր ձի, մինչ ե՞րբ դու ինձ
Կը հասցընես Դաւթի կըռւին:

«Մի՛ ժամի մէջ, կարմիրն ասաւ,
Կը հասցընեմ Դաւթի կըռւին»:
— Լեղի դառնայ, սեւ մահ ու ցաւ,
Ինչ տըւել եմ քեզ՝ էն դարին:

Հերթը եկաւ սեւին հասաւ
Գետին չերեա³⁶ փորը սեւ ձին :
— Է՛յ, ջան Սեւուկ, մինչ ե՞րբ, ասաւ,
Կը հասցընես Դաւթի կըռւին :

«Եթէ ամուր մէջքիս մընաս,
Ոտըդ դընես ասպանդակին,
Մինչեւ մէկէլ ոտըդ չուռ տաս,
Կը հասցընեմ», ասաւ սեւ ձին :

ԻԴ

Սեւ ձին քաշեց ձէնով Օհան,
Ձախը դըրաւ ասպանդակին,
Աջն էլ մինչեւ չուռ տար վըրան,
Կանգնեց Սասմայ սարի գըլխին :

Տեսաւ՝ Դաւթի նըժոյզն անտէր
Սարերն ընկած խըրխընջալով,
Ներքեւ Մըսրայ զօրքը չոքած,
Ինչպէս անծէր ծըփուէ մի ծով :

Օխտը դոմչի կաշի հագաւ,
Որ չըպատուի իրեն զօռից,
Կանգնեց Օհան, ամպի նըման
Գոռաց Սասմայ սարի ծէրից :

Հէ՛յ-հէ՛յ Դաւիթ, ո՛րտեղ ես դու .
Յիշի՛ր Ոսալը քո աջ թեւի,
Սուրբ Տիրամօր անուընը տո՛ւր,
Ու դուրս արի լոյսն արեւի...»

Ձէնը դընաց, դըմբդըմբալով՝
Դաւթի աղանջն ընկաւ հորում .
— Հա՛յ-հա՛յ, ասաւ, հօրեղբայրս է,
Սասմայ սարից ինձ է գոռում :

36 Ձերես. չտուաւ (երես՝ տուաւ) :

Ո՛րվ Մարութայ Աստածածին,
 Ո՛րվ անմահ խաչ սլատարադի,
 Ձե՛րդ եմ կանչել, — հասէ՛ք Դաւթին...
 Կանչեց, տեղից ելաւ ոտքի,

Էնպէս զարկեց ջաղացքարին՝
 Քարը եղաւ հաղար կըտոր,
 Կըտորները երկինք թրռան,
 Ու գնում են մինչեւ հօօր:

Ելաւ հորից, կանգնեց ահեղ:
 Սարսափ կալաւ դեւ Մելիքին:
 — Դաւիթ ախպէր, ե՛կ դեռ հստեղ,
 Սեղան նըստե՛նք, խօսենք կարգի՛ն...

— Էլ չեմ նըստիլ ես քու հացին,
 Դու տըմարդի, վախկոտ ու նենդ.
 Շո՛ւտ, զէնքըդ առ, հեծի՛ր քու ձին,
 Դո՛ւրս եկ մէյդան, կըռիւ անենք:

— Կըռիւ անենք, ասաւ Մելիք,
 Իմն է միայն զարկն առաջին:
 — Քոնն է, զարկի՛ր, կանչեց Դաւիթ
 Գընաց, կեցաւ դաշտի միջին:

Ելաւ, կանգնեց Մըսրա-Մելիք,
 Իր գուրզն առաւ, հեծաւ իր ձին,
 Քըչեց, գընաց մինչ Դիարբէքի
 Ու էնտեղից եկաւ կըրկին:

Երեք հաղար լիդր էր քաշում
 Հըսկայական իր մըկունդը.
 Եկաւ, զարկեց. կորաւ փռշում
 Ու երերաց երկրի գունդը:

Երկիր քանդւեց կամ ժաթ³⁷ եղաւ,
 Ասին մարդիկ շատ աշխարքում:

37 Ժաթֆ. շարֆ, երկրաշարֆ:

— Ձէ՛, ասացին, արնի ծարաւ
Հըսկաներն են իրար զարկում :

— Մեռաւ Դաւիթ էս մի զարկից ,
Ասաւ Մելիք իրեն զօրքին :

— Կենդանի ե՛մ , ամպի տակից
Գոռաց Դաւիթ Մըսրա-Մեւքին :

— Հա՛յ-հա՛յ , մօտիկ տեղից եկայ ,
Տե՛ս , ո՛րտեղից հիմի կըզամ :
Ու վերկացաւ , կանդնեց հըսկան ,
Իր ձին հեծաւ երկրորդ անգամ :

Երկրորդ անգամ քըշեց Հալար
Ու բաց թողեց ձին Հալարից .
Բուք վերկացաւ , տեղ ու տարաւ ,
Արար աշխարհ զողաց թափից :

Եկաւ , զարկեց . զարկի ձէնից
Մօտիկ մարդիկ ողջ խըլացան :
— Գընա՛ց Դաւիթ Սասմայ տանից ,
Գուժեց զոռոզ Մըսրայ արքան :

— Կենդանի՛ եմ , կանչեց Դաւիթ ,
Մին էլ արի՛ — հերթն ինձ հասաւ :
— Հա՛յ-հա՛յ , մօտիկ տեղից եկայ ,
Կանչեց Մելիք ու վերկացաւ :

Երրորդ անգամ հեծաւ իր ձին ,
Գընաց մինչեւ հողը Մըսրայ ,
Ու կնտեղից , գուրդը ձեռին
Քըշեց , եկաւ Դաւթի վըրայ :

Եկաւ , զարկեց բոլոր ուժով ,
Ծանըր զարկով հըսկայական .
Փռչին ելաւ Սասմայ դաշտից ,
Բըռնեց երեսն արեգական :

Երեք գիշեր ու երեք օր
 Փռչին կանգնեց ամպի նրման,
 Երեք գիշեր ու երեք օր
 Բօթը տըւին Դաւթի մահաւան:

Երբ որ անցաւ երեք օրը,
 Էն ամպի պէս կանգնած փռչում
 Կանգնեց Դաւիթ, ինչպէս սարը,
 Գըրգուռ սարը մէզ-մըշուշում:

— Մեկի՛ք, ասաւ, ո՞ւմն է հերթը:
 Սարսափ կալաւ դռն Մեկիքին,
 Մահաւն դողը ընկաւ սիրտը
 Ու տապ արաւ դռող հողին:

Գընաց, խորունկ մի հոր փորեց,
 Իջաւ, մըտաւ վիհն էն խաւար,
 Վըրէն քաշեց քառասուն կաշի
 Ու քառասուն ջաղացի քար:

Մընչալով ելաւ տեղից
 Էն առիւծի առիւծ որդին,
 Իր ձին հեծաւ ու փորթորկեց,
 Խաղաց, շողաց Թուր-Կայծակին:

Առաջ վաղեց մազերն արձակ
 Մեկքի պառաւ մայրը ջաղու.
 — Դաւիթ, մաղըս ա՛ռ ոտիդ տակ,
 Էդ մի զարկը ի՛նձ բաշխիր դու:

Երկրորդ անգամ թուրը քաշեց.
 Էս անգամ էլ եկաւ քուրը.
 — Դաւիթ, եթէ կուգես, կանչեց,
 Իմ սըրտին զա՛րկ երկրորդ թուրը...

Վերջին զարկի ժամը հասաւ.
 Ելաւ Դաւիթ երրորդ անգամ.
 — Էս մի զարկն ու Աստուած, ասաւ,
 Էլ մարդ չըզայ, պէտք է որ տամ:

Ասաւ, ելաւ ու փոթորկեց,
Թըռաւ, ցոլաց Դաւիթի հուր ձին,
Ձին փոթորկեց, փայլատակեց
Ու ցած իջաւ Թուր—Կայծակին:

Անցաւ քառսուն դոմշի կաշին,
Անցաւ քառսուն քարերը ցած,
Միջից կըտրեց ժանտ հըրէշին,
Օխտը դադ էլ դէնը գընաց:

— Կենդանի՛ եմ, մին էլ արի՛,
Գոռաց Մելիք հորի տակից:
Դաւիթ լըսեց, շատ դարմացաւ
Իրեն զարկից, Թուր—Կայծակից...

— Մելի՛ք, ասաւ Թա՛փ տուր մի քեզ:
Ու Թափ տըւաւ Մելիքն իրեն,
Միջից եղաւ ճիշտ երկու կէս,
Մէկն ընկաւ դէսն ու միւսը դէն:

Էս որ տեսաւ Մըսրայ բանակ,
Ձուր կըտըրուեց ահ ու վախից:
Դաւիթ կանչեց. — Մի՛ վախենաք,
Ակա՛նջ արէք հալա դեռ ինձ:

Դուք ըռանչալար մարդիկ, ասաւ,
Ձուրկ ու խաւար, քաղցած ու մերկ,
Հաղար ու մի կըրակ ու ցաւ,
Հաղար ու մի հոգսեր ունէք:

Ի՛նչ էք առել նետ ու աղեղ,
Եկել թափել օտար դաշտեր.
Ձէ՞ որ մենք էլ ունենք տուն—տեղ,
Մենք էլ ունենք մանուկ ու ծեր...

Ձանձրացե՞լ էք խաղաղ ու հաշտ
Հողագործի օր ու կեանքից,
Թէ՞ զըղւել էք ձեր հանդ ու դաշտ,
Ձեր հունձ ու փունջ, վար ու ցանքից...

Դարձէ՛ք եկած ճանապարհով
 Ձեր հայրենի հողը Մըսրայ.
 Բայց թէ մին էլ դէնք ու դօռով
 Վեր էք կացել դուք մեղ վըրայ,

Հորում լինեն քառսուն դադ խոր
 Թէ ջաղացի քարի տակին,—
 Կենեն ձեր դէմ, ինչպէս այսօր,
 Սամայ Դաւիթ, Թուր-Կայծակին:

Էն ժամանակ Աստուած դիտի,
 Ով մեղանից կըլնի փռչման.
 Մենք, որ կենենք ահեղ մարտի,
 Թէ դուք, որ մեղ արիք դուշման...»

1902

ԹՄԿԱԲԵՐՂԻ ԱՌՈՒՄԸ

ՆԱԽԵՐԳԱՆՔ

Հէ՛յ, պարոններ, ականջ արէք
Թափառական աշուղին,
Միրուն տիկնայք, ջահել տղերք,
Լաւ ուշ դըրէք իմ խաղին:

Մենք ամենքըս հիւր ենք կեանքում
Մեր ծննդեան փուչ օրից,
Հերթով դալիս անց ենք կենում
Էս անցաւոր աշխարհից:

Անց են կենում սէր ու խընդում,
Գեղեցկութիւն, դանձ ու դահ,
Մահը մերն է, մենք մահինը,
Մարդու դործն է միշտ անմահ:

Գործն է անմահ, լա՛ւ խմացէք,
Որ խօսւում է դարէդար,
Երնէ՛կ նըրան որ իր դործով
Կապրի անվերջ, անդադար:

Չարն էլ է միշտ ապրում անմեռ,
Անէ՛ծք նըրա չար գործքին,
Որդիդ լինի թէ հէրն ու մէր,
Թէ մուրադով սիրած կին:

Ես լաւութեան խօսքն եմ ասում ,
Որ ժըպտում է մեր սրտին .
Ո՞վ չի սիրում , թէկուզ դուճման ,
Լաւ արարքը , լաւ մարդին :

Է՛յ լաւ կենաք , ականջ արէք ,
Մի բան պատմեմ հիմի ձեզ ,
Խօսքըս , տեսէք , ուր է գնում ,
Քաջ որսկանի դիւլլի¹ պէս :

Ա.

Նադիր Շահը զօրք հաւաքեց ,
Զօրք հաւաքեց անհամար ,
Եկաւ Թըմկայ բերդը պատեց ,
Ինչպէս դիշերն էն խաւար :

— Հէ՛յ , քաջ Թաթուլ , կանչեց Շահը ,
Անմա՞հ էիր քեզ կարծում .
Ե՛կ , բերել եմ ես քու մահը ,
Ի՞նչ ես թառել ամբողջում :

— Մի՛ պարծենայ , գոռոզ Նադիր ,
Պատասխանեց էն հրական .
Գըլխովը շա՛տ ամպեր կանցնեն ,
Սարը միշտ կայ անսասան .

Ասաւ , կանչեց իր քաջերին ,
Թուրը կապեց հաւրունի ,
Թըռաւ , հեծաւ նըժոյգ իր ձին ,
Դաշտը իջաւ արիւնի :

Ու քառսուն օր , քառսուն դիշեր
Կըռիւ տըւին անդադար ,

1 Գիւլլա . (թրք .) զնդակ , փամփուշտ (հրացանի) :

Ընկան քաջեր, անթիւ քաջեր,
Բերդի դըլխին հաւասար:

Իրան, Թուրան ողջ եկել են,
Թաթուլն անյաղթ, աննըկուն,
Զօրք ու բարան խորտակւել են,
Նըրա բերդը միշտ կանգուն:

Ու միշտ ուրախ, յաղթանակով
Իր ամրոցն է դառնում նա.
Սպասում է քնտեղ կինը,
Զահել կինը սեւաչեայ:

Բ

Էն տեսակ կին,
Ես իմ հողին,
Թէ աշուղն էլ ունենար,
Առանց դէնքի,
Առանց զօրքի
Շահերի դէմ կը դընար:

Սիրոյ հընոց
Կրակ ու բոց
Էնպէս աչքեր թէ ժըպտան,
Մարդու համար
Օրւայ պէս վառ
Գիշերները լոյս կը տան:

Վարդի թերթեր
Էնպէս շուրթեր
Թէ յաղթութիւն քեզ մաղթեն,
Էլ քեզ ոչ Շահ,
Ոչ ահ ու մահ.
Ոչ գէնք ու զօրք կը յաղթեն:

Գ

Ու կըռւի դաշտում Շահի առաջին
Արին մի անգամ դովքը սիրունի.
Նըրան՝ իր տեսքով, հասակով, ասին,
Ձի հասնի չըքնաղ հուրին Իրանի:
Ծով են աչքերը Զաւարսքի դըստեր
Ու կորչում է մարդ նըրա հայեացքում,
Ճակատը ճերմակ էն ձիւնից էլ դեռ,
Որ բարձր Արուլի գաղաթն է ծածկում,
Նա է շունչ, հոգին իշխան Թաթուլի,
Նըրա սիրովն է հարբած էն հըսկան,
Նըրա ժըպիտն է քաջին ուժ տալի,
Որ դաշտն է իջնում առիւծի նըման:
Թէ տիրես, մեծ Շահ, դու նըրա սըրտին,
Թաթուլն էլ անդօր կընկնի ոտիդ տակ,
Հանգիստ կը տիրես եւ Թըմուկ բերդին,
Որ չես կարենում էսքան ժամանակ:

Դ

Էսպէս է ասել հընուց էտ մասին
Փարսի բիւլբիւլը, անմահ Ֆիրդուսին.
Ի՛նչը կը յաղթի կեանքում հերոսին,
Թէ չը լինին
Կինն ու գինին:

Արեւի նըման ճակատը պայծառ,
Նայում է խըրոխտ, կանգնած ինչպէս սար.
Ո՛րվ կանի նըրան գետնին հաւասար,
Թէ չը լինին
Կինն ու գինին:

Պարում է ասես կըռիւ դընալիս,
Գետընքից վերեւ թըռչում ման գալիս.
Ո՛րվ ցած կը բերի նըրան թըռչելիս,
Թէ չը լինին
Կինն ու գինին:

Թէկուզ եւ արար աշխարհ դայ վըրան,
 Կերթայ դէմ ու դէմ, տուր² չի տալ իրան,
 Ռուստէմ Չալն էլ չի յաղթիլ նըրան,
 Թէ չը լինին
 Կինն ու դինին:

Ե

Ու զըրկեց Շահը իր թովիչ երգչին.
 Գընա տե՛ս, ասաւ, թըմկայ տիրուհուն,
 Երգի՛ իմ սէրը նըրա առաջին,
 Պատմի՛ իմ փառքը ու գանձը անհուն:

Խոստացի նրան իմ ոսկի դահը,
 Խոստացի նրան ամե՛ն, ամեն բան,
 Ինչ որ կարող է խոստանալ Շահը,
 Երկրակալ Շահը իր սիրած կընկան:

Ուր ահեղ կըռուով չի մտնիլ արքան,
 Ղոնաղ է աշուղն իրեն սաղի հետ.
 Եւ ահա մի օր ծեր, թափառական
 Մի աղքատ աշուղ մըտաւ թմկարերդ:

Զ

Գոռում են, դողում թըմկայ ձորերը,
 Կանգնած է թաթուլ Շահի յանգիման.
 Չարկում են, զարկում դուշման զօրքերը,
 Արիւնը հոսում էն Քըռի³ նման:

Չարկում են, զարկում դուշման զօրքերը,
 Արիւնը հոսում էն Քըռի նման.
 Երգում է աշուղն իր Շահի սէրը,
 Անհուն գանձերը ու փառքն անսահման...

2 Տուր տալ. հաւանիլ, յանձնուիլ, անձնատուր ըլլալ:

3 Քըռ. կուր (գետը):

Լըսում է մատաղ թըմկայ տիրուհին .
 Եւ վըրդովում են իր միտքը թագուն
 Դաւաճան դործի ամօթը խորին
 Եւ արքայական փառքն ու մեծութիւն...

Լըսո՞ւմ ես դու, սիրուն տիկին,
 Այ նազանի աննըման .
 Նայի Շահի՛ն, իրեն զօրքի՛ն,
 Աշխարհքի տէքն անսահման...

Մեղ պէս տըկար մարդ է նա էլ
 Սիրուններին միշտ դերի .
 Քու ճակատին թագ է վայել,
 Լինիս չքե՛ղ թագուհի...

Լըսում է չքնաղ թըմկայ տիրուհին
 Գիշեր ու ցերեկ, նորից ու նորից .
 Ու դարձաւ նա լո՛ւռ, դալո՛ւկ, մըտախո՛հ,
 Ու քունը փախաւ սիրուն աչքերից...

Է

Դարձաւ իր կըռւից իշխան թաթուրը,
 Դարձաւ յաղթական իրեն զօրքի հետ,
 Սըրբեց, պատեանը դըրաւ կեռ թուրը,
 Յընծութեան ձայնից դողած թըմկաբերդ:

Խընջոյք է սարքել թըմկայ տիրուհին,
 Յերեկ է արել խաւար գիշերը .
 Հեղեղի նըման հոսում է դինին,
 Ու քէ՛Փ է անում Ջաւախքի տէրը:

Պըտոյտ է դալի չըքնաղ տիրուհին,
 Անցնում է, հըսկում սեղաններն ամեն,
 Յորդորում, խընդրում, որ ուրախ լինին,
 Որ լիքն ու առատ բաժակներ քամեն:

— Հապա լըցրէ՛ք, իմ քաջ հիւրեր,
 Բաժակներդ լիովի,

Խըմենք — Աստուած կըտրուկ անի
Թուրը իմ քաջ Թաթուլի:

— Է՛յ, Տէր Աստուած կըտրուկ անի
Թուրը մեր քաջ իշխանի,
Նըրա շուքը միշտ հանապազ
Մեր գըլխիցը անպակաս:

Ու թընդում է թըմուկ բերդը
Էն աղմուկից խընդութեան,
Որոտում են տաղն ու երգը
Գոռ ձայներով յաղթական:

— Էն մըթին ամպից արծի՞ւն է իջնում,
Սարի արծիւը չեչտակի թափով:

— Էն թըմկայ բերդից Թաթուլն է իջնում,
Թըշնամու հոգին լըցնում սարսափով:

— Էն թըմկայ ձորում սեւ ա՛մպն է դռում,
Էն շա՛նթն է ճայթում էնպէս ահարկու:

— Էն թըմկայ ձորում Թաթուլն է կըռում,
Էն թուրն է շաչում էնպէս ահարկու:
Ի՛նչ սարի արծիւ կը հասնի քաջին,
Ի՛նչ Շահ կը կանգնի նըրա առաջին:

Ու չի դադարում երգի հետ վարար
Կախէթի¹⁴ գինին խելագար հոսել,
Խըմում են տիկնոջ թանդ կեանքի համար,
Որ էն ժայռերին ծաղիկ է բուսել:

Որ կըռւի դաշտում կեանք չեն խընայում,
Եւ ընկածների սուրբ յիշատակին,
Որ երկընքից են այժմ իրենց նայում...
Խըմում են կըռող քաջերի փառքին,

¹⁴ Կախէթ. վրաստանի նահանգ մը՝ որ ընտիր գինի ունի:

Պըտոյտ է գալի ծաղիկ տիրուհին,
Անցնում է, հըսկում սեղաններն ամեն,
Յորդորում, խընդրում, որ ուրախ լինին,
Որ լինն ու առատ բաժակներ քամեն:

— Օ՛ֆ, տիրուհի, Աստուած՝ վկայ,
էլ չենք կարող մենք խըմել.
էլ ուժ չը կայ, էլ տեղ չը կայ,
Շատ ենք խըմել ու յողնել...

Ու հանդչում է թըմուկ բերդը,
Պապանձում է ու մարում,
Հարբած, յողնած տէրն ու զօրքը
Մըրափում են խաւարում:

Ը

Լուռ ու խաւարչտին կամարների տակ,
Յողնած ու քընած բաղմութեան վըրով
Թըռչում են, թըռչո՛ւմ. սեւ, չարագուշակ
Երազներն ահեղ անվերջ խըմբերով:

Երազ է տեսնում թաթուլ իշխանը,
Որ վիշապ օձը եկել է ահա,
Եկել փաթաթւել, իր բերդը պատել,
Գըլուխը դըրել ետ պոչի վրայ:

Ու բարձրացնում է հըրէշն ահռելի,
Իրեն գըլուխը բարձրացնում է վեր,
Բարձրացնում մինչեւ բարձունքը բերդի,
Մինչեւ թաթուլի պալատն ու տըներ:

Պառկած է իրրեւ թաթուլ իշխանը
Նազելի կընոջ գըլուխն իր կըրծքին,
Ու իբր ասում է՝ վե՛ր կաց, իմ հրեշտակ,
Թո՛ղ, որ սպանեմ ես էտ հըրէշին:

Էսպէս է ասում Թաթուլ իշխանը,
Ու զարհուրանքով տեսնում է յանկարծ,
Իրեն սիրելի կընող գըլխի տեղ
Օձի գըլուխն է կըրծքին ծանրացած...

Թ

Է՛յ, հըսկեցէ՛ք, ի՞նչ էք քընում,
Քաջ ղինւորներ Թաթուլի.
Ո՞վ է, տեսէք, տանջւում մըթնում,
Քուն չի աչքին մօտ դալի:

Ձը լինի թէ յաղթահարւած,
Ճարը հատած թըշնամին
Դաւ է դնում մութն ու մեռած
Կէս գիշերւայ էս ժամին:

Վե՛ր կացէք, վե՛ր, ամբողջ գիշեր
Մարդ է գընում ու դալի.
Հէ՛յ, զարթնեցէ՛ք, առիւծ քաջեր,
Պահապաններ Թաթուլի:

Վե՛ր կացէք, վե՛ր, հարբեցրել է
Իր յաղթական հիւրերին.
Բաց է անում դուռն ու դարպաս
Ձեր դաւաճան տիրուհին:

Դա՛ւ... դա՛ւ... ելէ՛ք... կոչնա՛կ... պահնա՛կ...
Ձէնք առէք չո՛ւտ ... ձի հեծէ՛ք, ձի՛...
Ճըռընչում են, դըղըրդում են
Դարպասները երկաթի...

Ժ

Բաց արաւ ցերեկն իր աչքը պայծառ
Աշխարհքի վըրայ, Ջաւախքի վըրայ,
Աւերակ բերդին, սեւ ամպի նըման,
Ծուխն ու թըշնամին չոքել են ահա:

Յաղթութեան փառքով ու գինով հարբած
Քընած են բերդի եւ զօրքերն եւ տէր,
Ու յաւիտեան էլ մընացին քընած,
Դաւին անտեղեակ, ցաւին անտարբեր:

Նըստած է Շահը. նըրա առաջին
Ահա իրիկւան քէֆի սեղանը.
Նայում է Շահը անտէր դահոյքին,
Մտքովն անցնում է աշխարհքի բանը:

Աշխարհքում հաստատ չըկայ ոչ մի բան
Ու մի՛ հաւատալ երբեք ոչ մէկին.
Ոչ բախտի, փառքի, ոչ մեծ յաղթութեան,
Ոչ սիրած կնկայ տըւած բաժակին...

Ու լի դառնութեամբ հարցընում է նա
Դալուկ, մարմարիոն թըմկայ տիրուհուն.
— Պատասխան տո՛ւր ինձ, մատնիչ սեւաչեայ,
Մի՞թէ Թաթուլը քաջ չէր ու սիրուն...

— Քաջ էր ու սիրուն քեզնից առաւել.
Մի բարձր ու ազնիւ տղամարդ էր նա.
Կնոջ մատնութեամբ ամրոց չէր առել,
Զէր եղել կեանքում երբէք խաբեբայ...

Էսպէս տիկինը տըւաւ պատասխան.
Անհուն ցասումից մըռնչեց Շահը.
— Հէ՛յ, դահի՛ճ, գոռաց դադանի նըման,
Դահիճը իսկոյն մըտաւ սրահը:

ԺԱ.

Դահիճն եկաւ ոտից դըլուխ
Կարմիր հագած ու արիւն,
Ու դուրս տարան իր պալատից
Թըմկայ չըքնաղ տիրուհուն:

Տարան անտակ էն ժէռ քարից,
Որ կանգնած է մինչ էսօր,
Էն ահաւոր քարի ծէրից
Գըլորեցին դէպի ձոր:

Գէլ ու աղէս եկան հանդից
Ազահ սիրտը լափեցին,
Յին ու ազուա իջան ամպից,
Սեւ աչքերը հանեցին:

Անցաւ անտես ու աննման
էն սիրունը աշխարհից,
Ինչպէս ծաղիկն անցած գարնան,
Որ չի ծաղկիլ էլ նորից:

Անցաւ դալում⁵ էն մեծ արքան
Իրեն փառքով ու զօրքով,
Անցաւ թաթուլն էն յաղթական
Ու իր քաջերն էն կարգով:

Ու նրանցից մենակ անմեռ
էս զրոյցը հասաւ մեզ,
Որ մեզանից յետոյ էլ դեռ
Պէտք է խօսել միշտ էսպէս:

ԺԲ

Հէ՛յ, պարոններ, ահանջ արէք
Թափառական աշուղին,
Սիրուն տիկնայք, ջահել տղերք,
Լաւ ուշ դրէք իմ խաղին:

Ամենքս էսպէս հիւր ենք կեանքում
Մեր ծննդեան փուչ օրից,
Հերթով գալիս անց ենք կենում
էս անցաւոր աշխարհից:

Անց ենք կենում... միայն անմահ
Գործն է խօսւում լաւ ու վատ.
Ա՛խ, երանի՜ ով մարդ կը գայ
Ու մարդ կերթայ անարատ:

⁵ Զալում. ժիր, ճարպիկ:

THE HISTORY OF THE
THE HISTORY OF THE
THE HISTORY OF THE

THE HISTORY OF THE
THE HISTORY OF THE
THE HISTORY OF THE

THE HISTORY OF THE
THE HISTORY OF THE
THE HISTORY OF THE

THE HISTORY OF THE
THE HISTORY OF THE
THE HISTORY OF THE

THE HISTORY OF THE
THE HISTORY OF THE
THE HISTORY OF THE

THE HISTORY OF THE
THE HISTORY OF THE
THE HISTORY OF THE

THE HISTORY OF THE
THE HISTORY OF THE
THE HISTORY OF THE

THE HISTORY OF THE
THE HISTORY OF THE
THE HISTORY OF THE

ԼԱՍԱՐՍՆ ԲԼԲՈՐԼ

(ՀԱՏՈՒԱԾՆԵՐ)

որ դեռ չունչը արարչական ծաւալում էր օդի մէջ,
 որ [դեռ նոր էր կոյս աշխարհքում կեանքը խաղում] պարզ
 ու պերճ,
 որ տիրում էր ամենուրեք սէրն ու հանդիստն անվրդով,
 որ դառն ու գէլ դեռ միամիտ խաղում էին իրար քով,
 ուրք ու առատ էն ժամանակ, արեւլուսի կողմերում
 արի Ալամ թաղաւորն էր..... իշխում ու տիրում:
 իշխում էր նա արեւի պէս, որ ամենքին կենսաձիր
 իրեն լոյսն ու ջերմութիւնը շրջալում է անխրտիր,
 ամ թէ դարնան անձրեւի պէս, որ թափւում է յորդառատ,
 յովացնում է ու լիացնում, չի հարցընում լաւ ու վատ:

— Ո՛վ լուսեղէն, դըռներըդ բաց,
 Հող ու ջրի առատ Աստուած,
 Ո՛վ, որ էսքան բարիք ու փառք՝
 Աշխարհքն անծէր, ծովերն անտակ
 [Հստեղծեւ ես,] փրօել, լըցրել,
 Ո՛վ գըթառատ, քեզ եմ խնդրել —
 Ինչպէս որդիս իր մօր դըրկին
 Գընաց կարօտ աչքն աշխարհքին,
 Նըրանք էլ թող իրենց կեանքից
 Կարօտ գընան լիքն աշխարհքից.
 Դըրախտ այդին կըտրի չոր փուշ
 Իրենք գազան չար ու ապուշ:

Էսպէս կանչեց ու, ո՛վ սարսափ, փոխեց դըրախտն էն անուշ,
 ծառը կըտրեց կոպիտ մացառ, որթը-բաղեղ, վարդը-փուշ:

Պահնորդ մարդիկ դարձան զազան զուրկ նշանից մարդկային
 Կորցրին եւ [տիպ] եւ քնքշութիւն, որ ի բնէ ունէին...
 [Գոյժը տարան թաղաւորին, էսպէս, էսպէս պատմեցին,
 Սարսափ կալաւ թաղաւորին, փետտեց մազերն իր դահին:
 Ծեր, բազմափորձ մարդիկ կանչեց [Ալամ արքան] իր ատենան
 — Ո՞վ է, ասաւ, ձեզնից տեսել կամ իմացել էսպէս բան.
 Ինչ պատիժ է, որ զալիս է, ինձ ու երկրիս բովանդակ,
 եւ ինչ ճար կայ.

Խոնարհեցին մեծ ծերերը զլուխները ալեղարդ,
 — Թող շատ ապրի Ալամ արքան ոսկի դահին իր հաստատ.
 Հազար տեսակ ցաւի տուն է — էս աշխարհքը անցաւոր,
 Ու թւում է մարդու համար ամեն մի ցաւ անսովոր:
 Բայց դու եղիր [համբերատար] միտքդ պահիր միշտ երկաթ
 Յաւը պէտք է մարդը քաշի, ոչ թէ անշունչ սար ու քար:
 Էս աշխարհքում ոչ առաջին, ոչ վերջինն ես դու մենակ,
 Պատահել են էսպէս դէպքեր կեանքում ամեն ժամանակ —

Մենք էն գիտենք, որ նա, ով որ ցաւ է տւել ու աղէտ,
 Ստեղծել է ամէն ցաւի ճարն ու ճամբէն իրեն հետ:
 Ձրկայ մի ցաւ արեւի տակ, չըկայ մի...
 Որ-չունենայ գիտութիւնը նրան մի դեղ կամ դարման.
 Գիտութիւնը [լոյս է,] արքայ, աշխարհ իջած երկնքից,
 Ճարեր ունի քաղած քամած ամեն հանքից ու տունիկից.
 Ետ է բերում նա մեռելին հողեւարքից իր վերջին,
 Մի հողին է միայն պակասում — հաւատարի արարչին:
 [Ինչ է սակայն նրա համար մարդը իրեն ցաւերով.
 Քընընում է, չափում կըշտում երկիրն իր խոր ծովերով,
 Փորփըրում է հողի շերտերն — հասնում ըսկիզբն ամենի,
 Երբ դեռ անկազմ կար երկիրը խաւար ծոցում անհունի...
 Նայում է վեր — համրում — դիտում աստղերն, արեւ ու լուսին
 Ով կայ [արդեօք նրանց վրայ] ինչ կայ նրանց երեսին,
 Գըտնում է նոր-նոր երկիրներ տարածութեան մէջ անսահման
 Զոկում այնտեղ արարածներ — շունչ կենդանի մեղ նրման
 Եւ աշխարհքներ, որ պաղել են վաղուց իրենց ողջ կեանքով,
 Եւ աշխարհքներ, որ տակաւին այրւում են հուր երկունքով,
 Եւ հալւում է ամեն միւր քանի միլիոն տարի կայ,
 Կամ դեռ քանի քանի միլիոն տարի ունի մինչեւ մահ.

Ո՛վ իմանայ թէ ինչ հրաշքներ կան իր առջեւ տակաւին,
Սակայն, թողնենք հրաշքները — դանք, տէր արքայ, քո
ցաւին:]

Մի բան չըկայ վեր երկընքում, երկրի վրայ ու տակին, —
Ողջ զընընել, ողջ մաղել է՝ — խաղալիք են իր ձեռքին:
Կանչիր թող դան քո տէրութեան մեծերն ուսեալ ու դիտուն
եւ քո մարդկանց եւ քո այգուն նրանք կանեն օգնութիւն:

Էսպէս ասին, պատուէր տաւ թաղաւորը ծերունի
Կանչեց երկրի ամեն կողմից գիտուններին անւանի:
— Ինձ պատմեցէք, բացէք տեսնեմ, ինչ տեսիլք է արդեօք սա,
Որ ծերութեան անկար օրով իմ աչքերով ես տեսայ:
Այդի արի, բար հասցըրի, վարդ [պահեցի անմամն,]
Արթուն, հրմուտ հաւատարիմ մարդիկ դըրի պահապան.
Մարդիկս ընկան մարդու կերպից դարձան արջեր չար — դժխեմ,
Վարդերս ամեն փուշ կտրեցին, փոխեց այդին իմ եղեմ.
Եւ ինչ հնար, [ինչ ճար որ կայ երկրի վրայ ու տակին,]
[Բարով բոյրով լցրէք նորից] եղեմական իմ այգին,
[Աղատեցէք, որ չըկորչեն իմ մարդիկը] յաւիտեան,
[Տւէք նախկին տիպը արնիւ, քնքոյշ] հողին բանական:

Էսպէս ասաւ, գլուխ տւին դիտունները արքային.
— Թող չատ ապրի Ալամ արքան ողջ ու հաստատ իր դահին.
Էս աշխարհքում ամեն մի բան ունի իրեն մի պատճառ,
Էն պատճառն էլ ուրիշ պատճառ: Էսպէս անվերջ, անդադար
Մինչեւ պատճառն սկզբնական, մինչեւ սկիզբն սկիզբների,
Ծագման խորհուրդն էս կեանքի, ակն ու աղբիւրն ամենքի:
Ընչի համար էսպէս է էս, շահ լինի քեզ թէ վրնաս,
Պէտք է քննես, առաջ բերող նըրա պատճառն իմանաս:
Երբ իմացար, թէ էս ընչից էս ինչ բանն է դուրս գալի,
Կարող ես դու առաջ բերես եւ հետեւանք ցանկալի:
Եւ արդ, քանդի ամեն մի բան ունի իրեն մի պատճառ,
Իսկ էն, ինչ որ պատճառ ունի, ունի նաեւ իրեն ճար,
Մի՛ տրտմիր դու, մեծ թաղաւոր, մեղ տուր միայն ժամանակ,
Որ քընընենք ու էս ցաւի պատճառն ու ճարն իմանանք:
Եւ զընացին քառսուն ցերեկ, քառսուն գիշեր տըքնեցին,
Յերեկն անդուլ, հանգիստ չառան ոչ գիշերը քնեցին.

Քրքրեցին, քընընեցին ամեն զբաւածք ու զբեանք,
Երբոր անցաւ քառասուն օրը եկան դարձեալ ապարանք.
Թող շատ ապրի Ալամ արքան ողջ ու հաստատ իր գահին,
Գլուխ տւին, էսպէս ասին (գլխուռնները) արքային:
— Քրքրեցինք, քընընեցինք մենք զաղտնիքը էս կեանքի,
Սահմանեցինք էութիւնը, տեղն ու ցեղը ամենքի.
Առանք մարդուն, որ [կեանքերի] ողն ու կապողն է վերջին,
Իջանք ներքեւ, կարդով շարքով, մարդուց անցանք մենք
արջին,

Արջից հաւքին, հաւքից սողուն ու սողունիցը ձրկան,
էսպէս հերթով հասանք մինչեւ էակները նախնական
[Մանրէները միարջիջ, որ]
Կազմուած են հիւլէներից անտեսներ ի մեր աչքին,
Որոնք ունին իրար ներհակ զօրութիւններ լաւ ու վատ,
Ու միանում ու լուծւում են մաքառելով անընդհատ.
էսպէսով էլ յօրինում են ելեւէջներ կեանքի մէջ,
Ոյժ կամ ծիւրում, ախտ կամ եռանդ, [կեանք ու] ծնունդ
եւ կամ վերջ...

Ծնւում, մեռնում, փոփոխւում է ամեն մինը իր կեանքով:
էս ինչ հիւլէն ներհակաւոր էն հիւլէին միացաւ
Ու փուշն ահա թերթեր տըւեց, անուշ բուրմունք ունեցաւ,
Կամ [ենթադրենք] թէ կատարւեց այլ միացում հակառակ
Ու վարդն ահա փոխւեց, դառաւ անհոտ մի փուշ հասարակ:
Արեան մէջ էլ էս ինչ հիւլէն սլակսեց կամ չէ՝ շատացաւ,
Ու մարդն ահա այլ կերպարանք — [այլ բնութիւն] ստացաւ...

էդ ամենը հրաշալի, կանչեց արքան անհամբեր.
Բայց ասացէ՛ք, ո՛վ խորիմաստ, ո՛վ բազմադէտ գիտուններ,
Ի՛նչպէս անենք, որ իմ այգին դառնայ դրախտն արաջւան,
Իմ մարդիկը զազանացած կրկին լաւերն էն [վաղւան:»]
էսպէս կանչեց, զբլուխ տըւին գիտունները արքային.
— Թող շատ ապրի Ալամ արքան բարձր ու հաստատ իր գահին.
Ճարեր արինք, դեղեր բերինք, աշխատեցինք մենք անքուն,
Հնար չեղաւ, դեղ-ճար չեղաւ ոչ քո մարդկանց, ոչ այդուն.
Ինչ գիտէինք բերինք արինք — փուշը մնաց էլ ետ փուշ,
Ու գաղանը դարձեալ գաղան, դաժան, կոպիտ ու ապուշ...»

Միտք էր անում տարակուսած դժբախտ արքան Հուրանի, Յանկարծ կանգնեց իր առաջին մի անձանոթ ծերունի:

Մի ծերունի պայծառ ու վեհ, ինչպէս տեսիլք սրբազան, Ալիքներին ծաղկեայտակ, ձեռին կաղնի դաւաղան. [ձիւն, Միրուքն երկար, մինչեւ դօտին, սխալտակ, ինչպէս նորեկ Գայլքը թեթեւ, դէմքը գւարթ, ու հայեացքը իմաստուն:

— Ողջո՛յն, ասաւ, բարի Ալամ, ողջո՛յն, վշտոտ թաղաւոր, էս աշխարհքում թէ մի ճար կայ, մի հընար կայ քո ցաւին, էն հաղարան աղնիւ հաւքն է, որ դու չունես տակաւին,

Որ երգում է հաղար ձէնով, հաղար ձեւով կանչելով, Հետն էլ բուրեան մշտադալար վարդ է թափում փնջերով. Եթէ երգի նա մի անգամ, կամ երեւայ նա մի օր [նորից նոր. Փռչ ու տատաակ վարդ կը փոխեն, վարդ կը ծաղկեն

Ու պահապան քո [ծառաներ,] որ դառել են այժմ արջ, Ետ կը դառնան քնքոյշ մարդիկ, աղնիւ ու լաւ քան առաջ...»

— Ո՛վ երկնառաք բարի դու ծեր, դո՛չեց արքան Պարզեւ կըրտամ ինչ որ ուղի աւետարեր քո լեզուն. [Երգում...»

Բայց ո՞ր երկրում, ո՞ր անտառում, ո՞ր սարում է նա — Միշտ երջանիկ կախարդական անկոխ, անմեռ աշխարհքում...»

Ասաւ ծերը, քամի դարձաւ ու չըքացաւ իր աչքից, Ապչեց արքան, [քչւեց] արքան աչքով տեսած հրաշքից:

* * *

Երեք կտրիճ որդի ունէր Ալամ արքան ալեւոր, Կանչեց իրեն երեք որդուն ու արքունիքն իր բոլոր:

— Տեսա՛ք, ասաւ, սիրուն որդիք, ինչ պատուհաս մեզ հասաւ. Մեր աշխարհքի միակ դարդը, միակ փառքը փրչացաւ:

Ես՝ ծերունի, սրբի տեղակ¹ ցուպ եմ արդէն ձեռս առել, Այժմ էլ վշտից ծունկս կըտրել, աչքիս լոյսն է խաւարել.

Ժիր մարդիկ էք, զէնքերդ առէք, ձիանք² հեծէք մամեհի Գնացէ՛ք... զըտէք բերէք ճարն ու դեղը մեր ցաւի:

[Առաջ եկաւ աւաղ որդին] — ո՛վ մեծափառ մեր ծընող,

1 Տեղակ. փոխանակ, տեղ (սուրի տեղ):

2 Ձիանք. (զրարար ձիան յողնակի ձեւէն):

Ես ձի կեղնեմ, դէնքըս կառնեմ, կերթամ, կանցնեմ, հո-
 ղից հող.
 Չեմ վախենայ, ետ չեմ դառնայ, ով որ կուզի դէմըս դայ,
 Եօթ զըլխանի վիշապ լինի, դեւ ու հըրէշ — թէ հսկայ.
 Ահա այսպէս սուրբս... կըտոր կտոր ես կանեմ,
 Երկնում լինի վայր կը բերեմ, ծովի խորքում — կը հանեմ:
 Ապա խօսեց միջնակ տըղէն. . . [չատակեր էն Շարան³].
 Հայրի՛կ, ասաւ, ես կը բերեմ խառ՝ բըրբուլը հաղարան —
 Կուղես հիմի նըշան արա, դու որոշիր օր ու ժամ,
 Ու թող լինիմ մօրըս որդին, եթէ յանկարծ ուշանամ, —
 Պէտք է միայն ամեն ուտեստ [վերցընենք, որ յանկարծ չը
 սովենք]
 Թէ չէ սոված մարդը կը մոռանայ ամեն բան

(Վերջում լսում է մեղմ նւագաձուլիւն եւ երգի ձայնը. ծաղիկապակը
 գլխին, քնարը ձեռքին, ողիմբով — աղջիկներով շրջապատւած գալիս
 է բանաստեղծը — Արեգը).

Ծաղիկալըսակ բըրբուրներից,
 Արշալուսի ժամերին,
 Նա ժըպտալով կանչում է ինձ
 Դէպի աշխարհքն իր վերին:

Խոր ու [խաղաղ] անտառներից,
 Լրուրթեան մէջ էն խորին,
 Ծրօնչալով կանչում է ինձ
 Դէպի աշխարհքն իր վերին:

³ Շարայ. Շարայ որդին է Արամայիսի եւ Թուր Արմենակի: Մովսէս Խորենացի պատմահայրը զանիկա կ'որակէ «յուրովածին եւ չատակեր»: Շարայ իր հօր կարգադրութեամբ իր բնակութիւնը կը հաստատէ Արաղած լեռան հիւսիսակողմի արգաւանդ դաշտին մէջ՝ որ իր անունէն Ծիրակ կը կոչուի: Աւանդութիւնը կը պատմէ թէ այնքան մեծ էր Շարայի չատակերութիւնը՝ որ հայ գեղջուկները առակի կարգ անցուցած կ'ըսէին.

Թէ քո Շարայի որդորն է
 Մեր Ծիրակայ ամբարքն չեն:
 այսինքն՝

Եթէ դու Շարայի որդորն ունիս
 Մենք Ծիրակի ամբարները չունինք:

⁴ Խառ. աղնիւ, ընտիր, հարազատ:

Կարկաչահոս մեր ջրերից,
Երբ թախծում եմ արեւին,
Կարկաչելով կանչում է ինձ
Դէպի աշխարհքն իր վերին:

(Ճամբարաժանում [կիցում] կանգնած է ծերը՝ գլուխն ամպերում) .

— Բարով, պապի, որ կանգնած ես անհունօրէն աշխարհի վեր,
Ծերունին խուլ որոտաց տատանելով ողջ աշխարհը՝
— Ես նա եմ, որին ամենքն են նայում, ինքը ոչ ոքի,
— Ես նա եմ, որին ամենքն են հարցնում, ինքը ոչ ոքի .
Կիցան ու վերջն եմ ես .

Եղբերքն] ու մէջն եմ ես,

Հնունն եմ ես,

Երունն եմ ես —

Հնուն, անես — ամենն եմ ես...

արով եկար աղնիւ կտրիճ:

[անդէտ

— Ո՛վ անպատում, [անհաս] դու մեծ, խարխալելով ու
Ենք հոսելով անց ենք կենում այս աշխարհից, որպէս գետ,
որ անտեղեակ հեռուներին լոկ արեւին է իմանում,

Եւ դու անհաս քո բարձունքից ողջ տեսնում ես ու քննում:

Եւ Կի՛ր, պապի, ցած խոնարհիր բարձր դուխդ ամպերից,

Եւ ցած իմաստուն քո լեզուն, մի սրտասխան ասա ինձ .

Եւ քննէ ճամբան, որ տանում է էն աշխարհը [երջանիկ,]

Եւ քննէ ճամբան աղնիւ հաւքն երգ է ասում կենդանի:

Եւ քննէ ճամբան վարդեր է թափում իր երգի հետ .

— Հա՛, հա՛, հա՛, հա՛, քահ-քահ խրնդաց ալեւորը իմաստուն

Եւ երկրնքի ոլորտները զրդրդացին անսահման .] [փնտռում,

— Հա՛, հա՛, հա՛, հա՛, խիզախ տրդայ . այն ճամբէն ես դու

Եւ քննէ ճամբան քննէ ճամբան, որ թափում է ամպերում .

«Անդարձ» է այն ճամբի անունն, ով որ ընկաւ էն ճամբան,

որով է նա յաւիտեան, ետ դալ չըկայ էլ նրան .

⁵ Ծերը ժամանակն է դիցարանական յղացումի ձեւով, որուն կը հանդիպի Արեւի՝ Հաղարան Բլրուլը փնտռելու ժամանակ:

⁶ Այիք . օդ (յունարէնէ փոխառեալ բառ):

[Անդարձ է աշխարհքում ամեն բան,
 Ինչ որ դնաց — էլ ետ չի դայ յաւիտեան]
 Ճամբէն մին է, ցաւը, հաղար, — հաղար տեսալ տառապանք
 Բըռնած են այն դժար ճամբէն ու մաշում են ամեն կեանք
 Սարեր կան էն ճամբէն կապած, թռչունը չի անց կենում.
 Խոր անդունդներ, որ նայելիս, մարդու աչք է սեւանում.
 Հուր անապատ, որ անցնելու ամբողջ կեանքը չի հերիք,
 Ամեն քայլում դեւ ու հրէշ, ամեն կողմից փոթորիկ...

Ինչ են դեւեր ու հրէշներ, երկիւղ չունեմ ես սրապի,
 Եւ իմ ճամբէն ոչ փոթորիկ, ոչ տառապանք կըկապի.
 Սով, նեղութիւն չեմ հասկանում, չեմ էլ հողում էդ մասին
 Ո՛ւմ է պախել մի կըտոր հաց էս աշխարհքի երեսին:
 Եւ ինձ այնպէս հեշտ է թըլում «անդարձ» ճամբէն էն քարոտ
 Եւ այն աշխարհքն այնպէս հեշտ է ու էն հաւքը այնքան
 մօտ...

— Ո՛ւ յաւիտեան անձնապաստան ու մոլորած դուք մարդիկ
 Հեշտ է թըլում փափաքելին ու սիրածը միշտ մօտիկ...
 Հեշտ է — սակայն ցընորքի մէջ, ու սըրտին է մօտ թըլում:
 Բայց չի կարող ոտքը հասնել, ուր որ սիրտն է թափառում:

Անձնուրաց հոգի, որ քաջ ու անվախ
 Ընտրում ես ընկնում այս անդարձ ճամբան
 Որ յօժար սըրտով քո կեանքը մատաղ
 Ուխտել ես դադան մարդի փըրկութեան,
 [Ծերիս] օրհնանքն էլ թող լինի քեզ հետ,
 Հարհհաս լինի նեղութեան օրում,
 Բարով դու հասնես վայրն երանաւէտ,
 Ուր որ Հաղարան բիւրիւլն է տիրում:

— Չըքնաղ անունով քո սէդ աղջըկայ
 Կանչում եմ ահեղ, ծովերի արքայ,
 Լըսիր անյատակ ջրերի խորքից
 Մըշտածուի, անսաստ քո մըթին յարկից.

Տո՛ւր ինձ Քամի ձին, թըռչուն Քամի ձին,
 Որ ես՝ մահացու տրկար հողածին՝
 Հասնեմ երջանիկ աշխարհքն աննրման
 Ուր վարդ է թափում Բըլբուլն հաղարան.
 Ա՛ռ, նըշանն ահա քո սէդ աղջըկայ,
 Լըսիր ինձ [ահեղ] ծովերի արքայ,
 Տուր ինձ Քամի ձին՝ հասնեմ փափազիս,
 Բըլբուլը բերեմ, հասցընեմ այդիս,
 Փուշը վարդ փոխեմ թովչական երդով, —
 Բիրտ դադանը մարդ-բանական հողով:»

Էսպէս կանչեց՝ ու փոթորիկն ելաւ ծովից կապուտակ,
 Մըթնեց երկինք, մըթնեց երկիր, իրար անցաւ ողջ աշխարհք,
 Ու ահաւոր թոհ ու բոհից, անդունդներից էն մըթին,
 Հուր հըրեղէն իր թեւերով ցոլաց կրակ Քամի ձին.
 Ու մինչ վայրի սլանում էր դէպի հեռուն աշխարհի,
 [Հասաւ] բըռնեց հըզօր ձեռքով Արեգն արագ ու արի,
 Ձըգեց իսկոյն ոսկի սանձը, ոսկի սանձը զօրաւոր,
 Ձըսպեց անդուսպ էն [հզօրին բաղկով հաստատուն]
 Դէպի վերեւ ձգեց [Քամի] ձին՝ տայ արեւին ու վառի,
 Դէպի ներքեւ ուղեց [զարկի] գետինը՝ ջախջախի —
 Բայց... Քամու ձին յաղթահարեա՞ծ ու հընադանդ յաղթողին
 Լեզու առաւ, մարդու նման էսպէս դարձաւ հըզօրին.
 — Ի՞նչ ես ուզում, քաջ հողածին, ո՞ւր ես ուզում՝ քեզ
 [Թէ երկինք քեզ հանեմ:]⁷ [տանեմ.]

7 Յ. Թումանյանի «Հաղարան Բլբուլ» կիսկատար քերթուածի այս առաջին մասը առած ենք Ե. Չարենցի խմբագրութեամբ (Երեւան, 1934) լոյս տեսած «Գեղարեստական երկեր»-ու Անտիպ րանատեղծութիւններ բաժինէն (էջ 132-140):

Հետեւեալ երկրորդ մասը դարձեալ նոյն հրատարակութեան Պօէմ-Ոնր-ու բաժինէն (էջ 46-51), ուր սակայն վերնագիրը աննկատելի տարբերութեամբ Բիւլբիւլ (Բյուլբյուլ) է:

Անտիպէն մասը անթուական է. անկասկած հեղինակի կեանքին վերջին տարուան աշխատութիւն. մինչ այս վերջին մասը հնագոյնն ըլլալու է՝ համեմատ իր կրած թուականին՝ 1914:

(ՀԱԶԱՐԱՆ ԲԻՒԼԲԻՒԼ)

ԱՐԵԳԸՑ ՍԵՒ ԱՇԽԱՐՀՔՈՒՄ

Գընա՛ց, գընաց Արեգ արի, գընաց, ընկաւ մի աշխարհ,
Երկինքը սեւ, գետինքը սեւ, սեւ բովանդակ ու խաւար:
Առաջ գընաց. դէմն ահագին մի սեւ ամրոց կանգնեց լուռ.
Էն ամրոցից մի ձէն եկաւ, մի ձէն տըխուր ու տըխուր:
Վերեւ նայեց, տեսաւ շարմաղ մի աղջիկ է լուսեղէն,
Յետը լալիս յուսակըտուր, յետը կանչում է իրեն:

ԱՂՋԻԿԸ

Ախտո՛ս, կտրի՛ճ, ա՛խ ո՞ւր եկար
Էս աշխարհքը սեւ ու մութ.
Ո՞ր անօրէն մարդն էր արդեօք,
Տըւեց էդպէս քեզ խորհուրդ:
Փախի՛ր շուտով, անա՛հ տըղայ,
Թէ՛ չէ՛ էդտեղ որ մընաս,
Սեւ, մարդակեր Դեւը կը գայ
Այժմ կանի քեզ մաս մաս:

ԱՐԵԳԸ

Բայց ո՞վ ես դու, սիրուն աղջիկ,
Ի՞նչ ես էստեղ դու շինում,
Եւ ինչո՞ւ ես էսպէս աղի
Արցունք թափում, լաց լինում:

⁸ Արեգը՝ ինչպէս տեսանք վերեւ՝ բանաստեղծն է որ Հաղարան Սոխակը փնտռելու կ'երթայ:

Ի՞նչ է արել էտքան սիրուն,
 էտքան քնքուշ մի էակ,
 Որ փակել են մութն ու անդուռն
 էտ ամբողջում մեն-մենակ:

ԱՂՋԻԿԸ

Իմ յանցանքը էս է, աւա՛ղ,
 Որ սիրուն եմ ես էսքան.
 Սըրա համար Սեւ Դենն եկաւ
 Մեր աշխարհքը աննրման,
 Եկաւ բռնի յափըշտակեց
 Հայրենական իմ վայրից,
 Բերաւ էս սեւ բանտում փակեց,
 Զըրկեց պայծառ օրերից:
 Նըրա թըշառ դերին եմ ես.
 Էստեղ անդուռն իմ բանտում
 Լուռ ու մենակ փակած էսպէս
 Մաշում եմ ես անխընդում:
 Բայց, ա՛խ, նըրա ժամն է ահա,
 Հիմի կը դայ նա նորից...
 Փախի՛ր, փախի՛ր, անահ տըղայ,
 էս սեւ ու մութ աշխարհից:

Արեգը

Ես չեմ վախում, քոյրիկ անդին,
 Ես չը դիտեմ ահ ու մահ,
 Ես կը մընամ բանտիդ տակին,
 Ի՞նչ սեւ հըրէշ կուզի դայ:
 Ու կը մեռնեմ էստեղ ես էլ,
 Որ էլ չապրեմ էս օրից,
 Կամ կը փըրկեմ ինձ հետ քեզ էլ
 էս սեւ ու մութ աշխարհից:
 Միայն դու ասա՛, թէ ո՛ր ճամփով,
 Ո՛ր կողմից է նա գալու,
 Ու ո՞րտեղ եմ իմ նետերով
 Նըրա կեանքին վերջ տալու:

ԱՂՋԻԿԸ

Ահա էն սեւ սարի տակից
 Նա կ'երեւայ ահաւոր .
 Նըրա ձէնից , բերնի հուրքից
 Սասանում են սար ու ձոր :
 Եօթը ազահ դըլուխ ունի
 Միջի դըլխին պիտ դարկես ,
 Ու չես կրկնել զարկըդ նորից ,
 Ինքն էլ խնդրի թէկուղ քեզ :
 Լսի՛ր , ահա գալիս է նա
 Անպարտելի ու խաւար . . .
 Գընա՛ , կըտրիճ , խսկ ես էստեղ .
 Աղօթում եմ քեզ համար . . . »

Սեւ աշխարհքը էլ աւելի մութը կոխեց ակնակիր .
 Դեւի ձէնից զարհուրելի դողաց երկինք ու երկիր :
 Եկաւ Սեւ Դեւն , ինչպէս սեւ ամպ , հուր ու կըրակ չաղ տալով ,
 Եկաւ անհուն կատաղութեամբ , ինչպէս պըրծած մի սեւ ծով :
 Դեռ չատ հեռից նա նըջմարեց իր թշնամուն լուսաւոր ,
 Ու հեռաւոր մութի միջից խուլ որոտաց ամպադոռ :

ՍԵՒ ԴԵՒԸ

Ո՞վ ես խիղախ դու հողածին ,
 Ի՞նչպէս մըտար իմ հողը դու ,
 Ո՞նց չի հասել քո ականջին
 Գոնէ անունն իմ ահարկու :
 Միթէ աչքով դու չը տեսա՞ր
 Գիւղ ու քաղաք ողջ ամայի .
 Մարդ եմ կերել հազար հազար ,
 Քեզնից էլ քաջ ու վիթխարի :
 Իսկ դու ո՞վ ես , չընչին մարդուկ ,
 Որ կըռիւ ես գալիս իմ դէմ .
 Ահա տեսնեմ , որ իմանամ՝
 Ինչ յիմարի պիտի ուտեմ :
 Յոյց տուր տեսնեմ՝ ի՞նչ ունես դու ,
 Տե՛ս , ես ունեմ եօթը դըլուխ . . . »
 Գոռաց հըրէջն էն ահարկու
 Արձակելով կըրակ ու ծուխ :

ԱՐԵՎԸ

Գալիս եմ ես, ո՛վ անճոռնի,
 Որ մեն մենակ կըռւեմ քեզ հետ,
 Կըրծքումս ունիմ մի սիրտ արի,
 Ձեռքըս ունիմ եօթը սուր նետ...

Ասաւ, ճայթեց զիւ աղեղը, ոռնաց վիշապն ահագին,
 Թաւալւելով տեղն ու տեղը, անիծելով Արեգին:

— Մին էլ դարկի՛ր... մին էլ... մին էլ...

Մըռնչում էր հողեւարք:

— Ես իմ մօրից մին եմ ծնւել,


Մի խօսք ունեմ ու մի դարկ:

Պատասխանեց Արեգը քաջ, փըչեց վիշապն իր հոգին.

Ու արեւի լոյսը ցոլաց Սեւ աշխարհի եղերքին:

(1914)






Յ Ա Ն Կ

Դէպի անհուն	5
Անուշ	19
Սասունցի Դաւիթը	51
Թմկաբերդի առումը	85
Հագարան Բլբուլ	97





ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



220027999

20m

